

• ՄԱՂԱՔԻԱ ՎՐԴ. ՕՐՄԱՆԵԱՆ

ՀԱՅՈՒԹԵԱՆ ՀՈԳԻՆ

ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՍԱՆԵԱՂ Ի ԼՍԱՐԱՆԻ ԿՐԹԱՍԻՐԱՑ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՅԻՒՍԿԻՏԱՐ Ի 26 ՄԱՅԻՍԻ 1879

Բ Տ Պ Ա Գ Ր ՈՒ Թ Ի Ւ Ն

1955

Յ Պ Ա Ր Ա Ն

ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ ԿԵԼԻԿՈՑ

ԱՆԹԻԼՈԱՍ-ԼԻՐԱՆԱՆ

ՄԱՂԱՔԻԱ ՎՐԴ. ՕՐՄԱՆԵԱՆ

ՀԱՅՈՒԹԵԱՆ ՀՈԳԻՆ

ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՍԱՆԵԱԼ Ի ԼՍԱՐԱՆԻ ԿՐԹԱՍԻՐԱՑ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՑԻՒՍԿԻՏԱՐ Ի 26 ՄԱՅԻՍԻ 1879

Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

1955

Յ Պ Ա Ր Ա Ն.

ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ ԿԵԼԻԿԻՈՑ

ԱՆԹԻԼԻԱՍ-ԼԻՐԱՆԱՆ

ՄԵՐ ՆՊԱՏԱԿԸ

Սիրելի՛ հայրենակից,

Մեր Եկեղեցւոյ բարձրաստիճան Գուրապետութեան մեծագոյն ներկայացուցիչներէն՝ Մաղաքիա Արքեպս. Օրմանեանի գործերէն երկրորդն է այս՝ որ ի յոյս կ'ընծայենք դարձեալ, նոր սպազութեամբ մը:

Այս վերհրաշարակութեամբ նպատակ ունինք տարածել մեր ազգային կեանքին մէջ՝ Լոբաշուրութեան, փոխադարձ յարգանքի եւ հասկացողութեան ռգի մը, որ եկած է առհասարակ մեր Եկեղեցիէն եւ եղած՝ մեր ոյժը:

Օրմանեան Պատրիարքի այս բանախօսութիւնը կը ցաւինք որ պահած է մինչեւ այսօր, եւ այսօրուան համար մանաւանդ՝ իր ամբողջ այժմեականութիւնը, որովհետեւ կը զսնենք անոր մէջ՝ այն մտահոգութիւնները, որ մերն էն այսօր ի տես իրարու չհանդուրժող հաստատական խմբաւորումներու պայքարին:

Մենք կը հաւատանք սիրոյ գերազանցութեան, եւ կը կարծենք բերած ըլլալ փոքր նպատակ մը՝ մեր այդ հաւատքի տարածման, երբ կը տարածենք սոյն գրեյլը — ՀԱՅՈՒԹԵԱՆ, ՀՈԳԻՆ:

Յոյս ունինք որ մեր այս ձեռնարկը պիտի զսնէ ապաստած քաջալերութիւնը՝ զիսակից ազգայիններու կողմէ, եւ պիտի կարենանք շարունակել Օրմանեան Պատրիարքի գործերու վերահաշարակութիւնը՝ ի յոյս ընծայելով երրորդ շաւ արժեքաւոր գործ մը — ՆԻՍԱՆԻՏԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆը:

ՏԱՀԱՏ ՍՐԱՊԵԱՆ

Տեա'րք և Տիրուհի'ք.

Երբ կրթասիրաց Ընկերութեան Գործադիր ժողովին հրաւէրը պատուեց զիս՝ այս երեկոյ բանախօսելու առաջարկութեամբ, ազատ թողուած էր բանախօսութեան նիւթը. այլ բնական հարկ մը կար իմ վրաս, այն է ազգային նիւթի մը մասին ճառել տգիտսիրաց զուարման առջեւ: Սակայն ընդարձակ է ազգային նիւթերու ասպարէզը և հոն ամէն ոք միշտ նորանոր կէտեր կը գտնէ. այսչափ ատենաբանք ազգային նիւթերու մասին կը խօսին առանց իրարու զրուցածը կրկնելու: Չեմ Ընկերութեան անունը, Տեա'րք, որ այս գրական հանգիսից հաստատութեան և յառաջադիմութեան հետամուտ եղել և է', իմ մտացս դիմաց ելաւ. կրթասէր հրաւիրակքն, կրթասէր ընկերքն, կրթասէ'ր ստուգիւ և ունկնդիրքս, մանաւանդ թէ ըսեմ բովանդակ իսկ բնակիչք երրակի թաղից հնոյ Ոսկեքաղաքիս, ուր է Հայութեան կեդրոններէն մին, ո'չ թէ թուովն միայն այլ և ըզձիւքն և ջանիւք: Բայց ի՞նչ է զոր կրթել կը սիրէք: Կրթասէրքդ, ո՞չ ապաքէն Հայն. վասն զի ազգային է հաստատութիւնդ և ազգային նպատակդ:

Այս նպատակին հետեւութիւնն է լաւ ճանչնալ առարկան զոր կրթել կը սիրէք. իսկ առարկան զոր պիտի կրթէք՝ մարմին մըն է բարոյական, ազգ մը, որ իւր գոյութիւնը գիտէ արտաքին պարագայից յարաբերութեան մէջ. իսկ իր էութիւնն հոգեկոն յատկութեանց յարաբերութեանցը վրայ հաստատեալ է: Դուք որ ձեր ազգը, Հայութիւնը, կրթել կը սիրէք՝ սոյն Հայութեան ի՞նչ ըլլալը պէտք է որ լաւ գիտնաք և խորունկ իմաստասիրէք, ուստի և ի՞նչ

ուրիշ նիւթ կրնաք ունենալ ձեր զննութեանց՝ եթէ ոչ Հայութեան հոգին, որ է ամենայն Հայոց հոգեկան յարաբերութեանց բովանդակութիւնը: Ահա՛, ունկնդիրք իմ սիրելիք, ի՛նչ մտածմունքով որոշեցի սոյն նիւթին մասին ճառել այսօր, կարծելով այսու ո՛չ թէ իմ ներքին բաղձանացս յագուրդ միայն տալ, այլ և ճշդիւ այդ Հայրանիս հաստատութեան և նպատակին համապատասխանել, և անոր սահմաններուն մէջ մնալ: Այլ որովհետեւ Հայութեան հոգին մասին խօսին՝ կրնայ մեզ նաեւ իմաստասիրական և քաղաքագիտական խնդրոց խորերը առաջնորդել՝ գործնական խնդիրները մոռցնելով, կ'ուզեմ այժմէն յայտնապէս զեկուցանել թէ տեսական խնդրոց ասպարէզը օտար է բոլորովին իմ նպատակէս, և պիտի աշխատիմ գործնական և գործադրական խնդրովք զբաղեցուցանել ձեր ունկնդրութիւնը: Անցաւ այն ժամանակը՝ երբ մեծ ինչ կը կարծուէր վերացեալ խնդրովք միտքերը յոգնեցնել և անիմանալի ճշմարտութեանց մեկնութեամբք ճոռումաբանել. այսօր գործի ժամանակ է, և ատենաբանքս իսկ այդ հարկին պէտք է հպատակինք:

Եթէ բարոյական մարմինի մը հոգին՝ իր անհատներու ընդհանուր եղած հոգեկան յատկութեանց և յարաբերութեանց բովանդակութիւնն է, ուրեմն Հայութեան ալ հոգին ամէն հայ անհատի սեպական հոգեկան յատկութեանց, և հայ անհատներու իրարու հետ յարաբերութեանց բովանդակութիւնն է: Թէպէտ և այդ յատկութիւնք և այդ յարաբերութիւնք մասնաւոր դէպքեր և մասնաւոր գործեր են, բայց անոնցմէ ընդհանուր բարոյական օրէնք մը յառաջ կու գայ, ինչպէս մասնաւոր բնական դէպքերէ և երեւոյթներէ՝ ընդհանուր բնական օրէնք մը կը հետեւցնեն բնագիտութեան իմաստունները: Այդ օրինաց հետե-

ւելով բնագիտութեան նման բարոյագիտութիւն մը ի լոյս եկած է, և ինչպէս բնագիտութիւնը իւր օրէնքը և իր իմաստները ունի, ասանկ ալ բարոյագիտութեան օրէնք և իմաստասէրք կան: Բայց բարոյագիտութիւնը առհասարակ մարդկութեան մասին կը խօսի, չառ կ'ընդհանրացնէ իր սկզբունքը՝ զննութիւնքը և օրէնքը, որպէս զի կարենայ ի մի միացնել և լծորդել ամէն մարդիկ, նախաջրհեղեղանը և այժմեանը, հնաշխարհիկը և նորաշխարհիկը, զարգացեալը և կիսավայրենին, Հրեան և Հելլէնը, Հայը և ոչ Հայը: Մենք այդչափ ընդհանրութեան պէտք չունինք. մարդկային սեռին այնչափ ցեղերէն մէկ հատը միայն առարկայ կ'ուզենք ընել մեր զննութեանց, որ տեսակ մը ազգագիտութիւն կրնայ կազմել, կամ ճիշդ եւս հայագիտութիւն, եթէ գիտնականաց խիղճը կը ներէ այսպիսի զննութեանց գիտութեան անուշ տալ: Բայց ինչո՞ւ չնրէ, ցորչափ մեր այդ զննութիւնք ալ գործերու վրայ կը հիմնուին, սկզբունքներով կ'իմաստասիրուին և օրէնքներու հաստատութեան կ'առաջնորդեն:

Դէպքերը և գործերը, որոնք կարծես թէ մեր բարոյական և ազգային մտաւորական աշխարհին երեւոյթներն են, ես բոլորովին իսկ մէկ կողմ կը թողում. յայտնի կ'ենթադրեմ՝ բոլոր իմ ունկնդրացս մեր ազգային պատմութեան յիշատակները, և մեր ներկայ ազգային դրից պարագաները: Ասոնք են մեր գիտութեան հիմունքն:

Եւ որպէս զի ընդ վայրապարծ չկարծուիմ՝ չուտով կ'ուզեմ յաւելուլ՝ թէ ո՛չ այս տեղ և այսօր մենք առաջին անգամ այդ հիմանց վրայ հաստատեալ բարոյական իմաստասիրութիւնը պիտի կատարենք, և ո՛չ թէ մենք անծանօթ գիտութեան մը անծանօթ օրէնքները գաղտնութեան խորերէն ի լոյս պիտի հա-

ներնք՝ և ոչ իսկ ի լուր աշխարհի անլուր բաներ պիտի խօսինք: Ամէն հայ անհատ, որ քիչ շատ իր ազգին պատմութեան տեղեակ է, որ քիչ շատ իր աշխարհներքեւ հանդիպած ազգային գործերու մասին կը խորհրդածէ, մէկէն կը սկսի անոնց յարաբերութենէն հետեւութիւն մը հանել, և իսկոյն իսկ վճռել թէ Հայն այսպէս կամ այնպէս է, և նոյն ժամուն բերման համեմատ՝ կամ երկնաշափ բարձրացնել զայն և կամ ինչուան անդնդոց խորերը իջեցնել: Այսպիսիներէն շատեր իրենց գաղափարը նսեւ գրով և հրատարակութեամբ ամէնուն ծանօթացնելու աշխատած են:

Այս տեսակ խօսից և գրութեանց վրայ ընդհանուր ակնարկ մը նետելով կը տեսնանք, որ անոնք որ Հայը կը գովեն, աւելի բանաստեղծական արդեանց վրայ կը հիմնեն իրենց խօսքերը, և իրենց մտաց աշխոյժը շարժողը՝ աւելի եղեմական դրախտն է, Մասեաց սարը, Նոյեան աղաւնին, պայծառ երկինքն, դաշտաց բուրմունք, գիւցազնական վէպը, Գողթնեան պոէտք, Եփրատայ ամուսնք, Երասխայ յորձանք, և ա՛յլ այնպիսիք, քան թէ բուն բարոյական արդեանց պարծանք: Մանաւանդ թէ նոքա այս վերջին դիտակէտին ներքեւ կը խօսին կամ կը գրեն, որչափ տարբեր ոճ կը գործածեն, որչափ վայեր կը կարդան, որչափ ողբեր, որչափ ստղտանք, որչափ ամբաստանութիւնք: Նոր իյուրենացիներ և Լաստիվերտացիներ, իրենց ազիոզորմ հեկեկանօք ամէնուն ահանջը կը լեցնեն:

Չափազանցութիւն մըն ալ դիտած եմ, և կ'ուզեմ զայն եւս ձեզի հաղորդել: Որք Հայուն մասին կը խօսին, իրենք ալ Հայ ըլլալով, թէպէտ և Հայուն անձնական կարողութեանց և կատարելութեանց ալ պարտուպատշաճ գովեստը ընծայեն, թէպէտ և լիա-

բերան վկայեն իր մտաց ընդարձակութիւնը, բնական աշխոյժը, գործունեայ ընաւորութիւնը, մարդասէր վարմունքը, և այլ աղէկ ձիրքերը, մէկէն կը յաւելուն թէ աւա՛ղ որ մերազգիք չեն գիտեր այս գեղեցիկ յատկութիւններէն արժանաւոր արդիւնքներ քաղել, և այդչափ երջանկութեան հասնելու կարողութիւն ունենալով հանդերձ՝ դժբախտ են իրենց իսկ յանցանքով. ո՛չ միութիւն ունին, ո՛չ չափաւորութիւն, ո՛չ արիութիւն, ո՛չ յարատեւութիւն: Ի՛նչ բախտեր, կ'ըսեն, չանցան մերայնոց ձեռքը, ի՛նչ պայծառ ժամանակներ չունեցանք մենք պատմութեանց մէջ. այլ վա՛յ մեզի որ մենք մեր ձեռքը զմեզ չկործանեցինք. մատնիչներ մե՛ր մէջէն իսկ ելան, անձնասէրք ազգը ընդոտնեցին, և անմիաբանութիւնը իրեն ներքին ոյժը փտեցուց: Ասոնց համար Մեհրուժան Արծրունին, Վասակ Սիւնին, Վեստ Սարգիսն և նմանիք՝ Հայութեան հրէշներ չեն, վասն զի մատնութիւնը և անմիաբանութիւնը կարծես թէ հայ հոգիին բնական կ'ընեն: Միթէ սովորական իսկ եղած չէ՞ մեր խօսից մէջ կրկնել թէ Հայ ըսել անմիաբան ըսել է, թէ Հայոց մէջ ամէն ոք առաջին ըլլալ կ'ուզէ, իսկ երկրորդ և ոչ ոք. թէ Հայք ամէն դժուարութենէ կը վհատին, թէ Հայք սկսիլ գիտեն, բայց պահպանել և յառաջ տանիլ չեն գիտեր:

Եթէ այդ ամէն բացատրութիւնք ստոյգ էին, և եթէ իրականութիւնն ալ այդ էր, պէտք էր ուրեմն որ ցաւօք սիրտի և արտասուելից աչօք խոստովանէինք թէ Հայութեան հոգին ընտիր բան մը չէ, և բնական ընթացիւք ալ այդ հոգիէն աղէկ բան մը սպասելու չենք. և որովհետեւ այդ հոգին է որ մեզ պիտի առաջնորդէ, որով պիտի գործենք, որմէ պիտի օգտուինք, չուզելով իսկ պէտք էր որ գլուխ-

նիս ծռէինք այդ բարոյական հարկին ներքեւ, որ բնական հարկին պէս զօրաւոր է, և բերանս իսկ առաջ չհերթար ըսել, պէտք էր որ ընդունէինք թէ Հայերս աղէկ ապագայ մը չունինք:

Ստոյգ եմ թէ ձեզմէ ոչ ոք իմ բերնէս այսպիսի խօսքեր լսել կը սպասէ, և թէ այս վայրկեանիս մէջ շփոթ գաղափարներ ձեր միտքն ալ գրաւած են: Հետեւութիւնը ընդունիլ կը դժկամակիք, և յայտնապէս ըսեմ, թէ կը դժկամակիմ և ես. իսկ նախընթացները ժխտել չէք համարձակիր բոլորովին, վասն զի դուք ալ թերեւս ստէպ ստէպ կրկնած էք այն ստգտանքները, զորս մեծ ինչ ընել կարծելով կը յեղիշեն շատեր: Իսկ ես ճշգիւ այդ կէտը պարզելու համար Հայութեան հոգիին մասին ճառել որոշեցի ձեր առջեւ: Հայութեան հոգիին մէկ մասը մեր իւրաքանչիւրին ներսն է, և մեզմէ շատերուն հոգին ինչ կերպ է, այն է Հայոց մեծամասնութեան հոգին, և Հայութեան հոգին ալ Հայոց մեծամասնութեան հոգին է: Կը զգա՞ք դուք ձեր ներսը այնպիսի հոգի մը ուսկից բոլորովին մերժուած ըլլան միաբանութիւնը, չափաւորութիւնը, արիութիւնը և յարատեւութիւնը: Ուրեմն եթէ դուք այսպիսի հոգի մը չէք զգար, և կարծեմ թէ այս կէտիս մէջ ոչ ոք կ'իլլայ իմ խօսքս ստել, ինչո՞ւ կը փութաք ձեր ազգայնոց ընդհանրութեան հոգին ամբաստանել: Ինչո՞ւ Հայեր և Հայուհիներ, ինքզինքնին իրր բացառութիւն ենթադրելով, յօժարակամ էք ընդհանրութիւնը մեղադրել:

Եթէ իմ կարծիքս կ'ուզէք լսել, ես պիտի պաշտպանեմ իմ ազգս. իմ կարծեացս համեմատ Հայութեան հոգին անանկ անպիտան չէ ինչպէս ոմանք կը կարծեն. ես աւելի մեծ գաղափար մը ունիմ իմ ազգիս վրայ. և երջանիկ կը սեպէի ինքզինքս եթէ կարենայի իմ կարծիքս ընդհանրացնել, և անոնց որ

աւելի խիստ են Հայութեան հոգին դատելուն մէջ՝ եթէ ոչ համոզողութիւնը, գոնէ բարեմիտ ընդունելութիւնը չարժեք:

Հոս ներուի ինձ քանի մը խօսքով զարտուղութիւն մը ընել, ի պատասխանի այն քննադատին որ զիս քիչ ազգասէր գտաւ երբ ուրիշ լսարանի մը մէջ խօսած տոննս Հայուն անցեալը համեստ գոյներով նկարեցի: Այն քննադատը, ո՞րք և իցէ, օտարազգի հեղինակաց կարծիքներուն կրկնող մը և Հայուն անցելոյն վրայ հարեւանցի ակնարկ նետող մը դատեց զիս: Ես լռեցի. վասն զի իմ բերանս չէր կրնար անձիս համար վկայել. սակայն աւելի մեծ պատճառ մըն ալ կար իմ լռութեանս. ես եղելութեանց վրայ կը խօսէի, իմ քննադատս կարելիութեամբ ինձ կը պատասխանէր. ես կ'ըսէի թէ չեղաւ, նա կը պատասխանէր թէ կրնար ըլլալ. և այսպէս ճշգիւ խօսելով, ան յաւէտ իմ խօսքս հաստատած կ'ըլլար եղելութեան մասին՝ քան թէ ժխտած: Ապա թէ ոչ՝ ուր կարողութեան և անհատական ճրից խնդիր ըլլայ, կարծեմ թէ պարտաւպատչած մեծարանաց պարտքս վճարած եմ յիշեալ բանախօսութեանս մէջ, և այս ալ ներքին և խորին համոզմանս հետեւութիւնն է, ուստի վարեալ և որով վառեալ այսօր ալ Հայութեան հոգիին մասին խօսելով, կը համարձակիմ հաստատել՝ թէ ի դուր կ'ամբաստանուի ան իբրեւ զուրկ միաբանութենէ, չափաւորութենէ, արիութենէ և յարատեւութենէ:

Ի՞նչ ըսեմ ուրեմն գործոց և դիպաց դէմ. վասն զի ես ալ զիտեմ թէ իմ դիմացս պիտի գրուին շատ մը գործեր և շատ մը դէպքեր, յորս անկեղծութեամբ խօսելով՝ Հայութիւնը իր վրայ ո՛չ գովեստ կրնայ հրաւիրել և ո՛չ համակրութիւն. մտնաւանդ ըսեմ, առիթ ալ կու տայ որ իր մասին բար-

դուին այն ազեղ ամբաստանութիւնները զորս վերեւ յիշատակեցի: Գործերը և դէպքերը միշտ ծանօթ կ'ենթադրեմ իմ ունկնդրացս, որով աւելորդ կ'ըլլայ մանրամասնութիւններ յառաջ բերել, որոնք սակաւաթիւ ալ չեն. մանաւանդ Արշակունեաց և Բագրատունեաց ժամանակ, և Պարսից և Հաֆարացեաց տիրապետութեան ներքեւ: Ո՞վ չ'արտասուեր կարգալով՝ որ հայ ձեռքեր Հայոց թագը օտարին կը յանձնեն, և հայ նախարարք Արտաշիր մը և Գագիկ մը արքունի գահէն իջեցնելով Պարսից և Յունաց ձեռքը գերի կը մատնեն: Արդարեւ եպիսկոպոս յանցանք և անարգութեան պատճառք, որոնք չեն գաղթիր երբեք ազտ մը ըլլալէ այն ազգին և այն աշխարհին՝ որուն մէջ աշխարհի աններելի ոճիրք գործուեցան: Սակայն կը խնդրէի որ հոս կենար հետեւութիւնը, և ալ աւելի առջեւ չանցնէր, և ոչ իսկ փաստ մը ըլլար ըսելու, տեսէ՛ք Հայութեան Հոգին, տեսէ՛ք հայ հոգիին արդիւնքն, տեսէ՛ք թէ ի՞նչ են Հայերն: Այդ հետեւութիւնն կարի իսկ խիստ է, և գործ մը օրհամ ալ ծանր ըլլայ՝ չ'ըսեմք ընդհանրութեան մը կերպը և հոգին կազմել: Այս ըսելով կը հիմնեմ խօսքս ազգաց պատմութեան վրայ, և ներկայիս իսկ զանազան ազգաց և պետութեանց մէջ հանդիպած դէպքերուն վրայ:

Գէշ և ազեղ գործեր մեր առջեւ կը դնէ Հայոց պատմութիւնը. անմիաբանութեան արդիւնք եղող կերպ կերպ արկածներ մեր հայրենեաց վրայ հասան. արդի ժամանակաց մէջ ալ կրնանք զանազան գործեր և պատահմունքներ առջեւ բերել, որոնց համար տխրելու և ամչնալու պատճառ ունինք:

Ի՞նչ ուրեմն. միթէ Հայոց պատմութիւնն է միայն որ աշխարհի թուխ կէտեր կը պարունակէ. միթէ Հայերն են միայն որ աշխարհի յանցանաց

պարտաւոր գտնուած են երկրիս վրայ. կամ թէ ներկայ ժամանակաց մէջ ալ Հայերէ զատ ուրիշներ չկա՞ն որ հաւասարապէս նոյն տեսակ ամբաստանութեանց կրնան ենթարկուիլ: Պատմութեանց փոքր ի շատէ տեղեակ լինելով, եւրոպացի ազգաց մէջ փոքր ի շատէ բնակելով և ճանապարհորդելով, և ժամանակակից դիպաց և տեղեկութեանց զբաղելով, կրնամ համարձակ խօսիլ և հաստատել՝ թէ գրեթէ պատմութիւն չկայ որ իր անուան անարգանք առթող գործեր չունենայ. պետութիւն չկայ որ զղջալու առիթ եղող պատահարներ չողբայ. և հիմա եւս ամէն տեղ և ամէն կողմ հակառակութիւնք կը տիրեն և ընդդիմութիւնք կը թագաւորեն: Ամենէն աւելի զօրաւոր և իմաստուն և խոհեմ կարծուած ազգաց մէջ ա'յնպիսի բաժանմունք և հերձուածք կը տիրեն, որոնք ինչուան ազգին և պետութեան հիմանց հաստատութիւնը կը վտանգեն: Ահա ընդ զոց բունելով՝ սնուպարձ կրնանք ըլլալ, վասն զի մեր արդիւնք չափազանց ազեկ կ'ենրեին մեզի. բայց նոյնպէս ալ ահա ընդ զոց եղող ի զուր ամբաստանող կ'ըլլանք, վասն զի թերութիւնք չափազանց մեծ կը սկսին երեւիլ մեր աչքին: Այդ կէտին վրայ երկար խօսելով բուն նպատակէս կը հեռանամ և երբ Հայութեան հոգին կ'ուզեմ իմացնել և ըստ կարի պաշտպանել, յանկարծ ինքզինքս ընդհանուր պատմութիւնը իմաստասիրելու վրայ կը գտնեմ: Ինչ որ բազդատութեան ոյժը ինձ կը թելադրէ, հասարակ պէտք է ըլլայ եւս ձեզ՝ որ զուրկ չէք պատմական և լրագրական ծանօթութիւններէ: Անոնց՝ որ գայթակղելով կը նային մեր միջնադարեան ժամանակաց անտեղութեանց վրայ, յիշեցուցէ՛ք անգամ մը եւրոպական լատին և գերմանացի ազգաց միջին դարերու պատմութիւնը. ի՞նչպէս օտարաց ձեռն տալով սեպական թագաւորութիւննին կը տա-

պաւէին, ի՞նչպէս տեսակ տեսակ բռնութեանց ջատագով կը կանգնէին, ի՞նչպէս ամէն ազգ ի ծուէնս պատառեալ հարիւրաւոր և հազարաւոր իշխանութեանց կը բաժնուէր, ի՞նչպէս համազգի և համարիւն եղբարք իրարու արեսամբ սրսկեալ ի խնջոյս կը բազմէին, ի՞նչպէս ժողովուրդ բռնաւորաց հաճոյից խաղալիք էր և գերի, ի՞նչպէս ամենէն ազնիւ զգացմունք տեղի կու տային մոլի և մոլեռանդ կրից, և ամենէն անճոռնի և անպիտան գաղափարներ ուղղութիւն և արդարութիւն կը սեպուէին:

Սակայն ես Հայութեան հոգիին ջատագովութեան համար, ունիմ եւս առաւել զօրաւոր փաստ մը, որուն վրայ կը հրաւիրեմ ամենէն աւելի անաչառ քննչաց նկատողութիւնը: Ազգ մը որ կայ, և կայ ոչ իբր պատմական յիշատակ, այլ իրբեւ կենդանի և քաղաքական կեանքով ճոխացեալ ազգ մը, իր այդ կացութեան համար երկու պատճառաց միայն պարտաւոր կրնայ համարուիլ. կա՛մ արտաքին յաջողութեանց կամ ներքին յատկութեանց: Արտաքին յաջողութիւնք են՝ իշխանութիւն, զօրութիւն, տէրութիւն, պաշտպանութիւն, հարստութիւն. իսկ ներքին յատկութիւնք՝ են արիութիւն, յարատեւութիւն, չափաւորութիւն և միաբանութիւն: Այս երկու ճամբէն ուրիշ միջոց մը գտնել անհնար է. կամ գըտնուածը այս երկուքին կը վերածուի, և կամ այս երկուքին ընկերակցութեամբ կը բազկանայ:

Այսօր Հայը կայ, և քաղաքական ազգի մը սեպնական կատարելութիւնները կը ցուցնէ: Այս իրական բան մըն է և ստոյգ է որ արտաքին յաջողութեամբ չէ որ մենք կըրցած ենք այդ գոյութիւնը պահպանել. որ ս'ըջափ ալ ստորին և դժուարին ըլլայ, տակաւին իր մէջ բաւական բան մըն է, չատերուն նախանձելի և առհասարակ ամէնուն համար

յուսադրիչ: Եթէ արտաքին յաջողութեամբ չէ, — վասն զի ո՞ւր են Հայոց տէրութիւնը, իշխանութիւնը, զօրութիւնը, պաշտպանութիւնը և հարստութիւնը. — հարկ—անհրաժեշտ է խոստովանիլ՝ թէ Հայոց ներքին արդիւնքն և արժանիքն են որ զինքը ազատեցին համայնաշինջ ձախորդութեանց ովկիանին ալիքներէն, և ամենածախ թշուառութեանց գազանին ճանկերէն, և այդ ներքին արդիւնք ալ իր հոգիին յատկութիւնք են. և ճշդիւ այն յատկութիւնք որոնցմէ մեզ զուրկ դատեցին և կը դատեն՝ որոնք դէպք և օրէնք իրարու կը խառնակեն, և մասնաւոր գործերէ ընդհանուր հոգիին պատկեր մը կ'ուզեն ստեղծել: Ուրիշ առիթով ալ Հայուն անցեալը քննեցի, և իր պատմութեան վրայ իմաստասիրելով հետեւցուցի թէ անհատական կատարելութեանց նշաւակ մըն է Հայութեան այժմեան դիրքը. և թէ ենք ինչ որ ենք՝ միայն այդ պատճառին համար որ իւրաքանչիւր հայ անհատ՝ լիովին ունեցաւ այն իղձերը, զգացումները, ձիրքերը և կարողութիւնները՝ որոնցմով իւրաքանչիւր ազգի բնական կեանքը կ'ապահովուի: Ինչ որ այն առթիւ այսպիսի շրջաբանութեամբ բացատրել պարտաւորեալ էի, այսօր աւելի համառօտութեամբ կ'անուանեմ զայն Հայութեան հոգին:

Բաւական զննութեանց մէջ մտանք, որով և կըրցանք քանի մը նախադասութիւններ հաստատել Հայութեան հոգիին կերպարանին և իր գործերուն արժանեաց վրայ. սակայն դեռ միջին մնաց զանազան ծայրից իրարու համաձայնութեան կերպը և մեկնութիւնը, որպէս զի բնագին հետախոյզը գտնէ իր մտաց յագուրդը, և անդստին յարմատի անդ ճանչնայ թէ՛ բարի և թէ՛ չար գործերու ծագումը, կատարելութեանց սկզբնապատճառը և թերութեանց չարժառիթը:

Մարդկային ընկերութիւնք առհասարակ, ինչ

անուամբ և կոչուին, ազգ կամ տէրութիւն կամ եկեղեցի կամ աշխարհ, անհատներու գումարումն են. և իւրաքանչիւր ընկերութեան հոգին անհատներու մեծամասնութեան հոգին արտադրեալն է: Կան անհատներ որ հասարակարար առմամբ անձնական յատկութիւններէ և կատարելութիւններէ զուրկ ալ չըլլալով այնպէս են, կամ թէ կատարելութիւններէ զուրկ ալ չըլլալով՝ այնպէս աննշանակ բնաւորութեան տէր են, որ գրեթէ կ'ոչնչանան և իրր թէ չգոն երբ անձնական դիրքերնին կամ իրաւունքնին կամ արգիւնքնին ի լոյս հանելու առիթ մը մէջտեղ կը դուռի: Իսկ ընդհակառակն կան եւս ընկերութիւնք որոնց անհատները առանձնակի առեալ բաւական ձիրքեր և կատարելութիւններ կը յայտնեն, որով իրենք իրենց կը բաւականանան. և որովհետեւ նաեւ անհատաբար յարգ կամ արժէք մը ունին, կը բաղձան, կը ձգտին և կը պահանջեն իսկ որ ընդհանրութեան ընթացից և գործերուն մէջ անհատներու դիրք մը որոշուի և անձնիւր գործունէութեան ասպարէզը չփակուի: Մասնաւոր որ ընկերութիւնք կամ ընդհանրութիւնք անմիջաբար անհատներու միութենէ չեն կազմուիր, հապա մասնի և ստորակարգեալ ընկերութեանց միութիւն են, ինչպէս ազգ մը որ ցեղերէ և քաղաքներէ կը բաղկանայ, պետութիւն մը՝ գաւառներէ և նահանգներէ, և եկեղեցին ալ՝ զանազան աստիճանի վիճակներէ և թեմերէ:

Ընկերութեան ամբողջութիւնը սովորութիւն է չըջանակի մը նմանցնել, որու կեդրոնն է այն բարձր իշխանութիւնը՝ որ ընկերութիւնը կը միացնէ. սակայն կեդրոնէն զատ ալ շառաւիղներ կան, և ասոնք ալ մասնաւոր և ստորակարգեալ ընկերական մարմինոց կամ մասանց օրինակներն են, որոնք թէպէտ կեդրոնին միաւորութեամբ՝ սակայն առանձնական դիրք

և գործ և ասպարէզ ունենալէ չեն դադրիր: Այդ շըջանակի և կեդրոնի նմանութիւնը այնչափ սովորական եղած է ընկերութեան նկատմամբ, որ նոյն նմանութեան վրայ հիմնելով անուն տրուած է երկու տեսակ վարչութեան կամ մատակարարութեան՝ որոնցմով ընկերութիւնք իւրաքանչիւր իրենց ներքին ընթացից և յարաբերութեանց կանոնները կը կարգադրեն:

Երբ կեդրոն կազմող բարձր իշխանութիւնը կը տարածէ ամէնունք իր ազդեցութիւնը և գործունէութիւնը՝ առանց թոյլ տալու մասանց և անհատներու իրենց սեպական կարողութիւնը և ձիրքը գործածել, մասնաւոր գործունէութեանց առջեւ խրամներ և պատնէշներ կ'ելլան, և ամենայն գորութիւն կաշկանդեալ կը մնայ, միայն կեդրոնականին թողլով խորհել և գործել և փորձել, այդ վարչութեան ձեւը կեդրոնական կամ կեդրոնացուցիչ կ'ըսուի: Հակառակն է, այսինքն արտակեդրոնական է, երբ թող կը տրուի որ նաեւ մասնաւոր գորութիւնք կարող ըլլան իրենց գործունէութեան ասպարէզ մը ունենալ: Հարկ չկայ իսկ յաւելուլ որ այդ մասնաւորաց գործունէութիւնք չեն կրնար կեդրոնականին հակառակ կամ ներհակ ըլլալ, առանց ընկերութեան ամբողջութեան և միութեան վտանգ հասցնելու, և պէտք է որ ամէնն ալ կեդրոնին մէջ միանան:

Թէ այդ երկու տեսակ վարչութեանց ո՞րն արդեօք նախադասելի է, երկար վէճերու նիւթ եղած է քաղաքագիտաց համար. և հաւասարապէս ապացուցմամբ և հաւանականութեամբ երկու կողմերն ալ իրենց կարծիքը պաշտպանել կը կարծեն, և պատմական դէպքերն իրենց իբր փաստ առնելով՝ երկու կարծիքներն ալ անտեղութիւններ և օգուտներ յառաջ կը բերեն. և արդեամբ ալ պատմութիւնը երկու կարծիքներուն ալ թէ՛ ի նպաստ և թէ՛ հակառակ

փաստեր կրնայ ընձեռել: Ես կ'ըսեմ թէ բնական օրէնք է որ հաւասարաչափ մեծութեամբ մարմին մը աւելի տոկուն է երբ զանազան մասերէ ոլորած և բազկացած է, քան թէ երբ միաձոյլ և միապաղաղ մարմին մը ըլլայ. այդպէս զանազան մանր գաւազանաց խտրձ մը՝ միակտուր փայտի հետ բաղդատեալ, և զանազան երկաթ թելերէ պարան մը՝ միաձոյլ երկաթին հետ բաղդատեալ, տրամագիծի հաւասարութիւնը ճիշդ պահելով: Ինչ որ ալ ըլլայ այդ նմանութեան փաստը, որոնցմով արտակերտնական ոճին պաշտպանք իրենց կարծիքը կը պնդեն, ևս կարծեմ թէ բուն խնդիրը լուծելու հիմը յարաբերական է. այսինքն թէ պէտք է նայիլ ընկերութեան մը մասանց և անհատներու կարողութեանց և ձրից և զգացմանց, այսինքն է հոգիին:

Եթէ ունիս այնպիսի ընկերութիւն մը՝ որու անհատները ո՛չ անհատական կատարելութեամբք հարուստ են, և ո՛չ անհատական իրաւանց խստիւ նախանձախնդիր, յարմարցողք անոնց կեդրոնացուցիչ վարչութիւն մը, ոչ միայն այն է անոնց յարմարը և օգտակարը, այլ կրնամ իսկ ըսել թէ այն իսկ է անոնց ուղածը: Խոսիւ կեդրոնականութիւնը այնպիսեաց զօրութիւնը կը կազմէ, և զիրենք միաբանութեան մէջ պահելու կը ծառայէ, մինչ մասնական և անհատական գործունէութիւն և իրաւունք՝ մասերը կը հեռացնեն. անտի՛ միաբանութիւն, անտի լըքումն, անտի իսկ ամենայն չարեաց և վնասուց ազբիւր: Այլ երբ ընկերութիւն մը ընդունակ է արտակերտնական վարչութեան, և մասեր և անհատներ կարող են իրենք իրենց բաւականանալ ի գործս և յարգիւնս, այս առթի մէջ՝ հակառակը վնասուց ազբիւր է. որովհետեւ մասնական ձիրք և կարողութիւնք երբ ինքզինքնին ճնշեալ և անգործ կը տես-

նեն, կը սկսին կեդրոնական լուծին դէմ նշկահել բնական իմն բերմամբ, և կեդրոնին և մասանց հետ միաբանութիւնը կը պակսի. և երբ այս կը պակսի՝ զօրութիւն, արիութիւն և յարատեւութիւն միանգամայն կ'անհետանան:

Մենք շատ բարձրացուցինք Հայերուն անհատական կարողութեանց և յատկութեանց արդիւնքը. դոնէ այս է իմ ներքին համոզումս, ա՛յս է իմ մտաց զատաստանը, որով շատ դժուարին խնդրոց լուծումը կը գտնեմ. և կը յաւելում իսկ՝ թէ շատ մտացի ազգայինք քան զիս իմաստունք, այդ կարծեացս իրաւունք կու տան և զայն ընդունելի կը դատեն: Քանի որ այս է իմ քննութեանցս հիմը, ներեցէ՛ք որ ձեր առջեւ առանց այլեւս շրջաբանութեանց մտնելու ուղղակի ըսեմ՝ թէ այն թերութիւնք զորս հին պատմութիւնք և ժամանակակից յիշատակք Հայութեան վրայ կը դնեն՝ իրենց արդարացումը կը գտնեն վերը բացատրուած գրութեան մէջ. և Հայոց անմիաբանութիւնք առաւել այն առիթներու մէջ նշանաւոր եղան երբ Հայութեան հոգիին ներհակընդդէմ ոճ մը օտարաց դրդմամբ կամ զանազան պարագայից թելադրելով, և կամ կեդրոնական իշխանութեան գլխոյն սխալանք կամ կամակորութեամբ Հայաստանի մէջ հաստատելու փորձեր տեսնուեցան: Արշակունի թագաւորաց վերջին ժամանակներուն մէջ, Մարգարաններուն և Ոստիկաններուն վարչութեան ներքեւ, և Բագրատունի թագաւորաց իշխանութեան ատեն, այդպիսի փորձերու օրինակներ պակաս չեն: Իրաւ որ ժամանակակից պատմիչք խորհրդածութեանց շատ հետամուտ չեն, մանաւանդ թէ իւրեանց գրութիւնք պակասաւոր են այն պարագայից մասին՝ որոնց վրայ պատմութեան փիլիսոփայութիւնը կը հիմնուի. միայն մեզի արտա-

քին դէպքերը և դժբախտութիւնները և ձախորդութիւնները կը պատմեն, իսկ իւրաքանչիւր անձին գաղանի դիմանց, սկզբանց, նպատակին, յատկութեանց և նմանօրինակ տեղեկութեանց բաւական մտադրութիւն չեն ընէր. որով և մեզ կարի դժուարին կ'ըլլայ ըստ արժանւոյն կշռադատել եղելութիւնքն. և երբ կ'ուզենք դժպիսի գործ մը քննադատել, չենք կարող ճշգրտութեամբ դանել թէ ի՞նչ էր բուն պատճառը, ի՞նչ էր սկզբնական գործը, ի՞նչ էր իւրաքանչիւր անձին դիտումը, և թէ յանցաւորին քով զրգուղ մը կա՞ր, կամ թէ յանցաւորը ի՞նչ սխալ կարծեաց մէջ կը գտնուէր: Քաւ յինէն չար գործ մը արդարացուցանել, կամ անմիաբանութեան չարութիւնը նուազեցնել, և կամ ազեղ յանցանք մը գեղերեսել: Բայց երբ կը տեսնեմ թէ Հայոց և Հայաստանի թերութեանց պատճառը սխալ դրութիւն մըն էր, ինչո՞ւ գայն յայտնապէս չգրուցեմ:

Հայրենասիրութիւնը կը պարտաւորէ զմեզ ուղղակի թերութեանց ալ մանրազնին քննութիւնը ընել, որպէս զի երբ կը տեսնենք թէ անոնք հասարակ և գործողէն անկախ պատճառ մը ունին, նախ և առաջ այն պատճառը բառնանք, և թերութիւնք ալ միանգամայն վերցուին:

Ինչպէս կ'ըսէի, պատմադիրք մեզ բաւական ծանօթութիւններ չեն տար կատարեալ գննութիւն մը կատարելու, և տուածնին ալ շատ երկար ուսումնասիրելու պէտք ունին. այսու հանգեւրձ ո՞վ որ անկողմնակալ հոգիով և թափանցիկ աչօք կը կարդայ մեր ամենէն դժբախտ դարուց պատմութիւնները, բնական ազդեցութեամբ մըն ալ կը նկատէ, թէ Հայաստան այն դարերուն մէջ ներհակընդդէմ վարչութեան ոճերու ալիքներու մէջ կը ծփար, հինը կ'աւրուէր և նոր մը չէր հաստատուեր, Հայութեան հոգիին բերման և

զգածմանց հակառակ գործեր կը կատարուէին, թագաւորք ազգային արժանապատուութեան մոռացողք՝ օտարաց պաշտպանութեան մէջ կը փնտռէին իրենց գօրութիւնը. և առանց սկզբուն մերթ յարեւելս և մերթ յարեւմուտս, մերթ ի քրիստոնեան և մերթ յոչ քրիստոնեան կը դարձնէին իրենց ակնկալութիւնը. անոր համար ալ նախարարք միաբանութիւն պահելու անհնարութեան մէջ կը գտնուէին, ցորչափ և ոճն կեդրոնական իշխանութեան ինքն իրեն հետ միաբան չէր: Նոյն պատմագրաց յառաջ բերած զէպքերուն մէջ դժուար չէ տեսնելն թէ երբ կեդրոնական վարչութեան ոճն այս կամ այն կերպով Հայաստանի մէջ հաստատել կ'ուզուէր, այն տեսն աւելի՛ կը զօրանային ներքին դժտութիւնք, վասն զի Հայութեան հոգին կ'ապստամբէր փորձի մը դէմ, զոր բոլորովին չեմ ուզեր դատապարտել, վասն զի կրնայ ըլլալ որ ժամանակին պարագաները թանձրացեալ և գործադրական սուժամբ այնպիսի փորձ մը կարենան արդարացնել: Սակայն չեմ կրնար ալ լռել թէ այն ոճը Հայութեան հոգիին յարմար չէր: Այդ հոգին, որու այժմ ո՛չ գովեստը կ'ընեմ և ո՛չ գարտիլը, այդ հոգին՝ որ Հայուն և Հայերուն և Հայութեան բնական է, ապստամբեցաւ նոսե օգտակարութեան լուծէն: Պակաս չեղան և չեն դէպքեր՝ ուր կեդրոնական և կեդրոնացուցիչ հոգիի օգուտները ակնհերեւ էին և են, բայց Հայութիւնն նոսե օգուտէն հրաժարեցաւ, և տոտլ կարծես թէ իր հոգիին բնական դրդմանց հպատակեցաւ: Կեդրոնական ոճին գործածութիւնը աւելի կարեւոր և աւելի օգտակար է դժուարին պարագայից մէջ և նեղութեանց ժամանակ, որպիսիք Հայոց և Հայաստանի վրայէն պակաս չեղան. նա ինքն Հոռոմ՝ հանրապետական կառավարութեան դադարումը կը վճռէր երբ Հայրենիքը վտանգի մէջ էր,

և զիկատորին անխտոր և կեդրոնացուցիչ իշխանութեան ինքզինքը կ'ենթարկէր: Այսպիսի պարագայից մէջ կը գտնուէր և Հայաստան. բայց Հայութիւնն զժբախտագոյն եւս էր, վասն զի և ո՛չ իսկ իր փրկութեան համար օրինաւորապէս խորհելու պատենն ունէր: Կրնամ ընդունիլ թէ անոնք որ Հայաստանի մէջ կեդրոնացուցիչ ոճի պաշտպան եղան, հայրենասէր նպատակ մը կրցան ունենալ. բայց կը խնդրեմ որ Հայոց և Հայութեան ամբաստանողներն ալ ընդունին թէ բնածին անմիաբանութեան հոգի մը չէր որ Հայը կը մղէր, հապա արտակեզրոնական դրութեան հակամիտութիւնը, և սոյն ոճին բնական յարումը, որ մինչեւ ցվերջին կէտ՝ իր հաստատութեան մէջ անլրդով մնալ կը նկրտէր:

Հինգ դարէ ի վեր Հայութիւնն զուրկ է քաղաքական զրութենէ, և խեղճ Հայն վարատական և ցրուեալ, հալածական և նեղեալ օտար երկնի տակ և օտար երկրի վրայ սկսած է փնտռել հանգստեան ճաշակը: Բախտը իրեն հետ ոխերիմ թշնամի՝ ունեցաւ տակաւին երբեմն երբեմն, աստ կամ անգ մարդասէր վայրկեաններ, և Հայաստանի սահմաններէն դուրս ալ Հայկայ որդիք ինքնօրէն և ինքնուրոյն վարչութեան հեաքեր ունեցան. հոս ազատ քաղաք մը, հոն առանձնաշնորհեալ կեանք մը. հոս ցեղի մը ապահարկութիւնը, հոն գլխաւորի մը արիութիւնը. հոս պատրիարքական իշխանութիւնը, հոն կայսեր մը բարեսրտութիւնը, թէպէտ անկատար, թէպէտ անհաստատ, բայց միշտ տեսակ մը հայ վարչութեան նշմարանք եղան: Ասոնց ամէնքն ալ քննեցէք, և կը տեսնէք որ Հայն իր հոգիին ազգեցութեամբ մղուած, իրեն համար ա՛յնպիսի վարչական ձեւեր և մատակարարութեան ոճեր փնտռեց և պատրաստեց՝ որոնց վրայ նաեւ ամենէն թեթեւ ակնարկ մը, ան-

միջապէս կը համոզէ թէ այն ժողովուրդը որ այդ ճամբաներով տպրեցաւ կամ կ'ապրի, չի՛ կրնար ընդունակ ըլլալ կեդրոնական ոճին:

Գաղտնիք մը յայտնած չեմ ըլլար, և ո՛չ ալ նոր ճշմարտութիւն մը խօսած, եթէ ըսեմ՝ թէ օսմանեան հպատակ Հայոց ազգը կամ հասարակութիւնը, որուն յաղթական Մէհէմէտի կամքն՝ պատրիարքական անուան և արտօնութեանց ներքեւ՝ վարչական ձեւեր և իշխանութիւններ շնորհեց, տարօրինակ դիպաց և աղիտալի գործերու պարատկան և պատասխանատու զանուած է անցեալ դարերու մէջ. բայց ե՞րբ. երբ խստապահանջ նոյնօրինակութեան, կեդրոնականութեան և մասնաւոր մարմիններու և անհատներու անգործունէութեան փորձեր փորձուեցան: Այս կերպ դէպքերուն՝ պատմութիւնը զանազան անուններ տուաւ, զանազան պատճառներ գտաւ, զանազան մեղադրանքներ հնարեց, զանազան յանցաւորներ ցուցուց, և աւելի եւս յառաջանալով ոմանք բովանդակ իսկ Հայութիւնը իբր բարւոյ իմիք անբաւական և անյարմար դատապարտեցին: Այլ եթէ այս ամէն մեկնութեանց տեղ Հայութեան հոգիին բնիկ յատկութիւնը գնէք, և անոր հակառակ եղած փորձերը և գործերը որոշէք, ա՛յլ պատմութիւնն ձեզի համար զժուարիմաց պիտի չըլլայ. և Հայութիւնն իր թերութեամբ և իր յանցանքներով հանգերձ գովելի պիտի երեւի ամէնուն. և որ իմ մտացս համեմատ առաւել նշանաւոր է և առաւել օգտակար՝ Հայութեան հոգին պիտի ցուցնէ իր բարի յատկութիւնները, և անոնց՝ որ Հայութեան բարիին կ'աշխատին՝ պիտի ցուցնէ թէ ո՛րն է նպատակին հասնելու ապահով ճամբան:

Դարեր իրարու յաջորդեցին, այլ Հայութիւնն թաղուած ասիական աշխարհներու խորը, նեղու-

թեանց և տառապանաց մէջ, կ'առաջնորդուէր միայն իր հոգիին բնական մղմամբ. և այն ժամանակներուն մէջ ալ գործով կը ցուցնէր ձեւ մը, որու անունը ապագայ ժամանակներու մէջ գրուեցաւ բարգաւաճեալ Եւրոպոյ ճարտարահար բառագիրութիւնէն: Հայը ստացաւ այն ատեն տեսականապէս (ինչպէս արտաբանք կը խօսին), ինչ որ արդէն ունէր իրականապէս. վասն զի ըստ իս 1860 տարւոյ «Ազգային Սահմանադրութիւնն Հայոց» ո՛չ թէ նորագիւտ ինչ է, կամ հայ ժողովրդեան վարչական ձեւին մէջ հիմնական փոփոխութիւն մը, այլ մանաւանդ. Հայութեան հոգիին պահանջը, որուն իր ձգտմամբ և ըզձիւք կը դիմէր, ինչպէս նուրբ օդը կը ձգտի վեր կ'ամ ինչպէս ծանրը կը դիմէ վար. և այս այնու՛ իսկ յայտնի է՝ այն օրէն որ սահմանադրական ձեւը օրինաւորութիւն ստացաւ և իր առաջին ժամանակաց անփորձութեանը արդիւնք եղող դժուարութիւնք վերցուեցան, կարծես թէ Հայութեան հոգին իրեն աւելի յարմար կացութիւն մը գտաւ, և իբր թէ ի բնէ անմիաբանութեան հակամէտն իր բնածին մոլութիւնը մերկացաւ, և ինչուան դժուարին գործերու թեւակոխելու կարողութիւն ունեցաւ. և այնպիսի գործերու՝ ուր անմիաբանութիւնն եթէ մերժուի իսկ ինքնին կը սպրդի. և այս այնչափ նախանձելի միութեամբ և միաձայնութեամբ կատարուեցաւ, որ օտարք անգամ մեր վրայ սխրանալով կրցան հայ ազգութեան վրայ ո՛չ միայն բարեյոյս լինել, այլ և վստահութեան հիմերը գտնել անոր մէջ:

Մեր այդպիսի հոգիին նշանակ է ևս այն, որ երբ կեդրոնական մեր իշխանութիւնը գրեթէ ոչինչ էր իր հարկեցուցիչ միջոցաց անբաւականութեան համար, և նոյն իշխանութիւնն կեդրոնական՝ գործադրութեան միջոցներէ իսկ զրկուած էր, Հայութեան

հոգին՝ որ մասնաւոր և անհատական կարողութեանց և գործունէութեանց լրումն է, գիտցաւ այնպիսի միջոցներ ստեղծել այս մասնաւոր և անհատական գործութեանց ձեռք, որ ազգս կրցաւ իսկ մրցիլ յառաջագիմութեան հետ այն ազգաց՝ որոնք իրենց ձեռքնու ունեցան զօրաւոր իշխանութիւններ և բարձր հովանաւորութիւններ: Միարանութիւնք և ընկերութիւնք, գաւառք և թաղք, ինչ որ են, ինչ որ գործեցին, և ինչ որ կը գործեն, անստելի կերպով խօսքերս կը հաւաստեն:

Բանախօսի մը սահմանուած ժամանակամիջոցը չատ ընդարձակ մեկնութեանց մանելու չի ներեր, մանաւանդ երբ լայնածաւալ նիւթ մը բացատրելու պարտքը ստանձնած է. այս պատճառով ինչ որ ցարդ ակնարկեցի Հայութեան հոգիին գործերուն և հակումներուն, կատարելութեանց և թերութեանց վրայ, թող բուական ըլլան մեզի, անոնցմէ ընդհանուր հետեւութիւն մը քաղելու և իբր ի հայելու յայտնելու անոր կերպարանը և ըսելու թէ «Ահա՛ Հայութեան հոգին»: Այլ որովհետեւ այդ հոգին է որ ինքն պիտի կրթուի և հայ ազգութիւնը պիտի կրթէ, պէտք է եւս որ այդ նպատակին հասնելու յարմար միջոցներ ցոյց տրուին, և հայ սիրտերու սնտախ վախերը փառատելով, ամէնուն սրտին մէջ քաջալերութիւն մը ազգուի՝ թէ Հայութեան հոգին ընտիր է. գոնէ ա՛յնչափ ընտիր, որ ամէն կերպ յառաջագիմութեանց և ամենեցուն ակնկալութեանց համապատասխանելու ընդունակութիւնը լիովին ունի:

Այլ մինչ այդ բացատրութեանց չսկսած, խօսքս քիչ մը ընդհատելու համար ձեր բարեհաճութիւնը կը խնդրեմ:

Ազգի մը հոգին կատարեալ կերպով ներկայացնելու համար գիտեմ թէ չի բաւեր ցուցնել թէ ան ի բնէ անմիաբանութեան հակամէտ չէ. կամ թէ բացատրել միայն թէ ինչ որ ամանց համար անմիաբանութիւն կ'երեւի ճշդիւ և արդեամբ այս կամ այն զգացման արդիւնքն կամ մոլութիւնն է: Անոր համար ես ինքնին կը խոստովանիմ թէ Հայութեան հոգին ձեզի յայտնած և իմացուցած չեմ ըլլար բանախօսութեան առջին մասովը՝ ուր գրեթէ սոսկ յիշեալ կէտին վրայ պնդեցի: Սակայն կարծեմ թէ դուք ալ դիւրաւ իմացաք թէ իմ գիմացս գլխաւորաբար դժուարութիւն մը կար, և եթէ կանխաւ գայն լուծել չաշխատէի, կարծես թէ ամէնուն սրտին մէջ գաղտնի խիղճի խայթ մը թողուցած պիտի ըլլայի, և բոլոր խօսքերս հարստահարիչ երկբայութեան առջեւ պիտի ցնդէին: Ապա թէ ոչ շատ դիւրին գործ է Հայութեան հոգին բացատրել, մէջնեղ գնելով այն գլխաւոր յատկութիւնները որոնք ընտիր հոգիի վիճակուած ազգաց հասարակ են, և քանի մը համառօտ մեկնութեամբ հաստատել թէ ի՞նչպէս այն ամէն յատկութիւնները մեր ազգին մէջ ալ կը գտնուին, և Հայութեան հոգին կը զարգարեն:

Հայութեան հոգին ունի բնական արթնութիւն մը, աշխոյժ բնաւորութիւն, մտաց սրութիւն, որեւիցէ առթի մէջ ինքզինքը չկորսնցնել, և ամենէն մեծ վտանգի մէջ կարող ըլլալ պաղ արեամբ և լուրջ տեսութեամբ ելից դարմանը գտնել և անոր գործաւորութեան փութալ:

Հայութեան հոգին ունի սրտի արիութիւն՝ որով երբեք ինքզինքը ընկճեալ չի կարծեր բախտին բռնաւորութենէն և թշնամութենէն, և թէպէտեւ դժբախտութիւնք երկնաշափ բարձրանան և ինքն ա-

նոնց ծանրութեան տակ հեծէ, սակայն այնու իսկ իր յայտը և փոյթը չի կորսնցնէր:

Հայութեան հոգին ունի աննկուն յարատեւութիւն՝ որով կը պահպանէ իր ազգութիւնը և կրօնքը, լեզուն և սովորութիւնը, միայն իր կամքին և մըտքին անդրդուութեանը վստահած, երբ ամէն կողմէն չըսեմ յորդորեալ՝ այլ ստիպեալ իսկ է անոնցմէ բաժնուիլ:

Հայութեան հոգին ունի բարուց չափաւորութիւն՝ որով գիտէ առթից համեմատ վարուիլ, և իր յաջողութեամբ չզեղծանիլ, ինքզինք մոռնալով՝ բերմանց և կրից գերի և խաղալիք չըլլալ. այլ ամէն պարագայից մէջ պահպանել իր միակերպութիւնը, և տրտաքին և բախտի միջոցաց գործածութիւնն ալ կանոնաւորութեամբ մը կարգադրել:

Հայութեան հոգին ունի այն միաբանութիւնը՝ որով ազգային անհատներ իրարու միանալով կրնան ընդհանուր բարին և ընդհանրութեան աւանդ եզոզ բարիքը պահպանել, պաշտպանել, յառաջացնել և կատարելագործել:

Ահա՛ ուրեմն Հայութեան հոգին. Հայութիւնն ունի ուրեմն ազգութեան հոգին, վասն զի ունի պահանջուած պայմանները: Մի՛ ըսէք՝ ինչ որ ես կը հաստատեմ թէ ունի, յաճախ փորձառութեամբ թերի կը գտնէք, և սեւեւ իսկ այնչափ թերի որ աւելի բնական կ'երեւի հետեւցնել թէ չունի: Մի՛ ըսէք, կ'աղաչեմ, վասն զի անիրաւած կ'ըլլաք դուք ձեր ազգը, և ձեր նախանձայն զուլթիւնը չ'արդարանար իրականութեան առջեւ: Ազգութեան հոգին, ոչ միշտ առաքինութիւն է մարդուն համար, այլ սեւեւ իսկ շահախնդրութիւն. գոնէ երկբայական է իմ մտացս դատաստանը երբ կը տեսնեմ՝ թէ ազգութեան հոգին հոմանիշ և համանուն կ'ըլլայ պաշտպանութեան և

օգնութեան, փառաց և պարծանաց, շահու և անձնագոհութեան: Երբ մէկը ունի ազգ մը զօրաւոր և փառաւոր, հարուստ և ազգու, ո՛հ, ի՛նչ գիւրիւն բան է այդ ազգութեան հոգին ունենալ: Ի՛նչպէս գիւրիւն է գոյզն գումար մը նպաստից և ոգորմութեանց նուիրել՝ երբ մէկը բիւրաւոր սակիներու տէր ըլլայ: Այլ ճշմարիտ ազգասիրութիւնը կամ ազգութեան հոգին, ա՛յն տանն աւելի առաքինական է, չըսեմ թէ գիւցազնական իսկ, երբ մէկը իր ազգութենէն ո՛չ թէ պաշտպանութիւն՝ այլ հարստահարութիւն, ո՛չ թէ օգուտ՝ այլ վնաս, ո՛չ թէ գիւրութիւն՝ այլ վատնդ, ո՛չ թէ փառք՝ այլ անարդանք յաւէտ իր վրայ հրաւիրելու տեսակէտի ներքեւ կը զործէ: Հայերս, թող մտէն աշխարհ այս պարծանքը մեզի ներէ, Հայերս ազգերնիս սիրեցինք և կը սիրենք, և կենդանի է Տէր, որ պիտի սիրենք, թէպէտեւ այդ սէրը մեզի նեղութեանց դուռ մը ըլլայ և ոչ այլ ինչ:

Հայուն ազգասիրութիւնը յայտնուեցաւ միշտ տնցեալ դարերու մէջ անգրգուշի հաւատարմութեամբ մը. թէպէտ բնական ընթացք իրաց այնպէս կը բերէին որ առանց այս ազգային հոգիին, այսօր Հայ մը իսկ մնացած ըլլալու չէր. և եթէ մէկը մնացած ըլլար՝ Հայութեան անունն իսկ բերանը առնել պէտք էր որ չուզէր, առանց մէկ գերաստիճան առաքինութեան: Որովհետեւ քնաւ շահու կամ գիւրութեան երեւոյթ մը չէր յորդորէր զինքը, — և եթէ կը ներուէ ինձ այսպէս ինքզինքս բացատրել, — երբ ուրիշ շատ մը ազգաց ազգասիրութիւնը, ազգային և քաղաքացիականութիւն կրնայ անուանուիլ, Հայոց ազգասիրութիւնը պէտք է ազգային մարտիրոսութիւն աւանանել:

Երբ այդ սկզբան վրայ հիմնենք մեր դատաստանները, ո՛հ, ո՛րչափ աւելի արդար և զիջող և բա-

րեմիտ կը պարտաւարութիւնք ըլլալ մեր ազգին թերութեանց հանգէպ, սրովհետեւ ըսել՝ թէ Հայերն ազգութեան հոգին կտտարեալ ունին, չ'ենթադրիր ամենեւին որ ըսուի եւս թէ Հայերը ազգութեան հոգիին և ազգասիրութեան գործերուն մէջ թերութիւն չունին: Այո՛ ունին, և բաղձալի է որ այդ թերութիւնք ալ վերնան, որով մեր ապագան աւելի յուսալից գիրք մը ստանայ. և բաց աստի՛ ա՛լ տեղի չտրուի այն շփոթից որուն մէջ շտաեր կ'իյնան, և Հայուն սեպհական թերութիւնները և Հայուն կամքէն անկաս չարութիւնները ի մի խառնելով, բոլոր իր դժբախտ գրից պատասխանատու՝ նոյն ինքն Հայը կ'ենթադրեն:

Այգայնոց և ազգասիրաց առջեւ կը խօսիմ, կը համարձակիմ եւս ըսել թէ առաջի ազգագիտաց, որոնց համար գաղտնիք չեն Հայոց և Հայաստանի դէպքերը և անոնց շարայարութիւնը: Քանի՞ դար է որ ձախորդութիւնը կը հալածէ Հայկայ որդիները: Ես կարծեմ թէ ճշմարտախօս ըլլալ ուղեկով՝ պէտք է ելլենք այն ժամանակները՝ երբ կրակապաշտութիւնը քրիստոնէութեան, Սասանեանը Արշակունիին, և Պարսկը ոչ Պարսկին դէմ անողոքի չակառկութիւն մը զգաց, և այս երկու կողմանց մէջ անհաշտ պատերազմներ գրգռուեցան: Հայաստան հազիւ թէ ամենամեծ փոփոխութեան մը ենթարկուած՝ յեղափոխութեանց կից եղող տկարութիւնը կը կրէր. զօրաւոր դրացիք այդ երկրին տէրութեան համար կը կռուէին, և միտքեր ալ յուզման մէջ մնացած՝ տեսակ-տեսակ խնդիրներ և շահեր՝ իրր թէ ամհհի ալիքներէ կը կոծուէին: Այն օրէն ի վեր կրնամ ըսել թէ Հայաստան տղէկ օր մը չտեսաւ, և չունչ առնելու կամ կազդուրուելու վայրկեան մը չունեցաւ: Արեւելքէն Պարսիկներ, արեւմուտքէն Յոյներ, Հագա-

րացիներ հարաւէն և Սկիւթացիներ հիւսիսէն, տասն-
չորս դարէ ի վեր շարունակ կը հարուածեն այդ
տարաբախտ ազգը և դժբախտ երկիրը, որ հզօրներու
մէջտեղը մնացած և անոնց կրից թատրոն ըլլալու
դժպիսի բախտն ունեցաւ: Հայն այդ կռիւներուն մէջ
ոչ միշտ ուղղակի հարուածոց նպատակն էր, թէեւ
անոնց հպատակ. հզօրք իրերաց ձեռքէն կ'ուզէին
դայն թափել. և իբր երկրորդական ինչ՝ զօրաւոր
դրացիներու բախտին կապուած էր Հայաստանի
բախտն ալ: Այդ ծովացեալ դժբախտութեանց օվկիա-
նին մէջ, աստ և անդ սեպացեալ ժայռեր փրփրադէզ
ալեաց դէմ մաքառելով Հայութեան գրօշը կրեցին
իրենց վրայ, և փառօ՞ք կրեցին: Մամիկոնեանք, Բա-
գրատունիք, Արծրունիք, Ռուբինեանք, Սրբելեանք,
Դուրիթ և Մխիթար Սիւնեցիք, և մինչեւ ցվերջին ժա-
մանակս քաջարի զաւակներն Ուլնիոյ, կրցան սպա-
րապետութիւններ, իշխանութիւններ, թագաւորու-
թիւններ, և ինքնօրէնութիւններ հաստատել և պաշա-
պանել մասնաւոր գաւառաց մէջ կամ ապահով լե-
րանց վրայ: Ասոնք թէպէտեւ Հայութեան բախտն
հիմնապէս չկրցան բարեօքել, սակայն մեծ արգասիք
ունեցան անոր գոյութեան և պահպանութեան օգնե-
լով, և այնպէս որ անոնցմէ իւրաքանչիւրն՝ թէպէ-
տեւ իբր ամենայն Հայոց իշխանութիւն և ազատու-
թիւն չկարենայ յառաջ բերուիլ, բայց և տոանձնա-
կի առեալ իբր կանոնաւոր՝ բարեկարգ՝ աշխարհաշէն
և զօրաւոր իշխանութիւն մը կրնան յիշատակուիլ,
գոնէ գլխաւորները: Իսկ ես ուրիշ նպատակ մը ու-
նիմ այս յիշատակները յառաջ բերելու մէջ. կ'ուզեմ
հետեւցնել՝ որ եթէ Հայերը ա'յնչափ թշուառութեանց
և դժուարութեանց մէջ այդպիսի գործեր կատարելու
և այդպիսի արդիւնքներ երեւան հանելու կարող ե-
ղան՝ ուրեմն կատարեալ ազգային հոգի, ճշմարիտ

ազգասիրութիւն, և իրական միաբանասիրութիւն
ունեցան, որոնցմով միայն այդ գործերն կը կատա-
րուին: Ի զուր է պնդել թէ աւելին կրնային ընել
եթէ ուզած ըլլային. կամ ինչպէս շատերը կ'ըսեն՝
եթէ միաբանութիւն ունենային: Վասն զի որոնք որ
այս աստիճան հաստատութիւն և յաջողութիւն ցու-
ցուցին, անոնք աւելի՛ լաւ դատաւոր են՝ քան թէ
այժմեան քննիչները. և եթէ կրնային՝ ո՞չ ապաքէն
ըրած ալ կ'ըլլային: Միւս կողմէն մի՛ մոռնաք Հա-
յաստանի վիճակը այն դարերուն մէջ, երբ յիշեալ
մասնական հայ իշխանութիւնները հիմնուեցան Մեծ և
Փոքր Հայոց, և նաեւ անոնցմէ դուրս եզոզ երկիր-
ներուն զանազան կողմերը: Չեր աչքերուն առջեւ
ըլլայ սեպացեալ ժայռին օրինակը, որ համաարած
օվկիանին ալիքներէն կը ձեծուի, կը դիմանայ, և
չի խորտակուիր. միթէ՞ օրէն է ըսել՝ թէ ինչո՞ւ զե-
ղատեսիլ ծաղիկներով զարդարուած չէ. կամ թէ
անոր վրայ մանր ծառեր, կանաչ թուփեր, փոքրիկ
տրօսներ միայն տեսնելով, կրնա՞ս ըսել՝ թէ ինչո՞ւ
բարձրուղէ ծառեր, զեղասաղարթ անտառներ և ըն-
դարձակ մարդագետիներ չի պարունակեր: Միթէ՞
զարմանալու չենք անոր հաստատութեան և մասանց
իրարու հետ ամրապինդ միութեան վրայ, որով միայն
անկործան մնացած է և կը մնայ:

Ուստի արգարագատ քննիչը պիտի դատէ այն՝
որ Հայութեան հոգիին պատասխանատուութենէ
անկախ թերութիւն է, ինչպէս որ ես ալ կ'ուզեմ ը-
նել. և ցուցնելէն ետք՝ թէ ինչպէս Հայութեան հո-
գին ընդհանրապէս առեալ ա'յնչափ ընտիր յատկու-
թեամբ զարդարեալ է և այնչափ գովելի է որչափ
և ուրիշ ազգաց հոգիները, և բացատրելէն ետք՝ թէ
չառ մը թերութիւնք որոնք հայ ազգութեան վրայ
կը դրուին, իրեն պատասխանատուութեան ներքեւ

չեն ինար, պէտք է որ աւելի առաջ անցնիմ, և ինչ որ մեր թերութիւններ են անոնք ալ մէջտեղ գնեմ: Թերութիւն կ'ըսեմ ո՛չ թէ բարոյական իմաստով միայն՝ որ է յանցանք, այլ նաեւ բնական իմաստով՝ որ է պակասութիւն:

Դժուարին դորձ ապաքէն, գալ և հրապարակաւ քարոզել թէ Հայութեան հոգին կամ հոյ ազգութիւնը այս կամ այն պակասութիւնները ունի: Ո՛չ թէ միայն եզրայրսիրութիւնն է լոկ՝ որ թերութիւնները ծածկել և քողարկել կը յորդորէ, այլ նաեւ անձնասիրութիւնը, վասն զի որով որ ընդհանրութեան մեղադրանք պիտի խօսիմ, նովին և զանձն իմ և զիման պիտի դատապարտեմ: Իրաւ է որ երբեմն այսպիսի կծու պաշտօններ ալ յանձն պիտի առնուն անոնք որ ուսուցանելու և վարդապետելու և ատենաբանելու պաշտօնը իրենց վրայ կ'առնեն, և ես իսկ խուսափիլ չեմ ուզեր այդ դառն և զկծեցուցիչ պարաքէն: Այլ միայն կերպարանը փոփոխելով, փոխանակ դատախազի և ամբաստանողի ձեւ առնելու, կ'ուզէի որ բարեկամի եղանակաւ քննենք թէ ի՞նչ ընել հարկ է մեզ ներկայ պարագայից մէջ, որ Հայութեան հոգին իր բարձր սկզբան և աւելի բարձր նպատակին համեմատ գործելով՝ մխիթարական և օգտակար արդիւնքներ յառաջ բերէ:

Սերման և բողբոջի և մշակութեան և պողտրեութեան օրինակը սրչափ ալ չատ սովորական եղած ըլլայ, նորէն կրկնելը միշտ աւելորդ չէ: Ազէկ պտուղ ընդունելու համար ազէկ սերմ ունենալ բաւական չէ, ազէկ ալ մշակելու և խնամելու է, ապա թէ ոչ նաեւ ամենէն ընտիր հունար վտիտ և տկար, որդնոտ և փտած պտուղներ կու տայ՝ եթէ կարեւոր խնամք եղած չէ: Հայութեան հոգին ալ երբեմն երբեմն ընտիր պտուղներ չտալուն ասկից զատ պատ-

ճառ փնտռելու հարկ չունինք: Որչափ պատմութիւնը կրկտենք, ո՛չ թէ մերինը միայն, հապա ընդհանրապէս բոլոր ազգերու պատմութիւնները, նոյնչափ կը համոզուինք թէ անքաղաքակիրթ ժամանակներու մէջ աւելի վնասակար գործեր կատարուեցան, և միեւնոյն ազգութիւնն և հոգին զանազան դարուց մէջ ստացած կրթութեան համեմատ զանազան գործեր ալ ցուցուց, երբեմն բարի և երբեմն չար, երբեմն գովելի և երբեմն դսրովելի: Աւելի զգալի եղաւ այդ կէտը մեր ազգին մէջ, որ ոչ միայն առաւել կամ նուազ կրթութեան ատեններ ունեցաւ, հապա և կերպ-կերպ կրթութեանց ազդեցութիւնն ալ զգաց՝ Հայաստանի տեսրց կրթութեան աստիճանին և անոնց ընկերական հոգիին կերպին համեմատ: Անդրստին այն ժամանակէն որ մեր պատմութիւնը ճշմարտութեան վրայ հիմնուած կը ներկայանայ մեզ, Հայաստանի տիրապետողաց փոփոխութիւնը՝ զգալի կ'ըլլայ նոյն իսկ հոյ ազգութեան հոգիէն, և պատմութեան քննադատ իմաստասէրները կարծես թէ չօչափելով կը զգան պարթեական և պարսկական, յունական և արաբական, քրիստոնէական և մահմէտական իշխանութեանց իրարու յաջորդելը: Հայը չկրցաւ չզգալ իր տիրապետողներուն հոգին. վասն զի երբ ասոնք քիչ մը հինցան՝ սկսան նաեւ լուծին հետ հոգին ընտելացնել իրենց հպատակներուն, և Հայութեան հոգին վրայ իրենց սեպհական թերութեանց զգածմունքները պատուաւորել: Բնական էր որ այդպիսի պատուաստք և նորութիւնք հաւասարապէս ամէն անհատներու վրայ չներգործեն, և անկից հակառակութիւնք ալ ծնին: Բայց աւելի չտրն այն էր որ Հայաստան իւր բախտին տարօրինակ և կոյր հարուածներովն՝ և ո՛չ իսկ կատարեալ միայն մէկ տիրոջ ձեռք ինկաւ, այլ ներհակընդդէմ զօրութեանց մէջ

տարուբերելով՝ մէկ կէսը այս՝ և միւս կէսը այն տէրութեան կամ ազգի ծառայութեան ներքեւ ինկաւ, և անոր ազգեցեութեանց ենթարկուեցաւ: Այսպէս, կը տեսնենք թէ դարու մը մէջ Պարսիկներ և Հոռոմներ, միւս դարուն մէջ Հագարացիներ և Բիւզանդացիներ, ուրիշ դարու մը մէջ ալ թաթարներ և Փրանկներ, և յաջորդ դարերու մէջ եւս ուրիշ ազգեր, բաժնեցին և անջատեցին՝ ո՛չ միայն Հայոց երկիրը, այլ և Հայոց հոգին, և տարբեր շահերու նկատողութեամբ տարբեր կարծիքներ յարուցին մեր մէջ: Ինչ զարմանք ուրեմն եթէ և ազգային միաբանութիւնն միանգամայն բաժնուեցաւ, երբ զանազան տէրութիւններէ և զանազան ազգեցութիւններէ զանազան կրթութիւններ սկսանք ստանալ:

Այսօր Հայութեան հոգին բարգաւաճելու առաջին միջոցն՝ զայն հաւասարապէս կրթելն է, հաւասարապէս կ'ըսեմ՝ թէ՛ չափուն և թէ՛ կերպին նկատմամբ: Իսկ հոգին կը կրթենք նախ մանկական հասակին մէջ, երբ գեռափթիթ է և ամէն կերպ ազգեցութեանց ընդունակ. բայց կը կրթենք նաեւ ապագայ տարիներուն մէջ, երբ Հայը չափահաս եղած է. և այն տան կը գործածենք լուսարանութեանց, հրատարակութեանց, քարոզութեանց, ժողովոց, ընկերութեանց, գործառնութեանց, և այլ նմանօրինակ միջոցներ. և որչափ ասոնք տարածուին՝ այնչափ աւելի կրթութիւնը իր ազգեցութիւնը կը տարածէ և Հայութեան հոգին ալ ոյժ և համարձակութիւն կը ստանայ: Իսկ մանկական հասակին կրթութեան, այսինքն է դաստիարակութեան գալով, այս նիւթը հոս չեմ ուզեր երկարել, ոչ թէ նուազ կարեւորութեանը համար, հապա գլխաւորաբար նիւթին ընդարձակութեան համար՝ որ ինքնիրեն բանախօսութեան մը կամ թէ բազում բանախօսութեանց ալ

նիւթ կրնայ ընծայել, և հոս հարեւանցի խօսիլն՝ յարգը նուազել է և ոչ թէ առաւելու: Միւս կողմէն ալ ազգն արդէն այդ կէտին նկատմամբ բաւական արթնցաւ, և թէ՛ իշխանութիւնք և թէ՛ ընկերութիւնք այդ նպատակին միայն իրենց փոյթը դարձուցած կը խօսին և կը գրեն, կ'աշխատին և կը հաւաքեն, կը ծախեն և կու տան սրպէս զի դաստիարակութիւնը բարգաւաճի:

Իմ խօսիցս նպատակին մէջ մնալով, այս միայն յիշատակեմ՝ թէ մեր տալիք դաստիարակութիւնն բոլորովին ազգային պիտի ըլլայ, ազգային ըստ լեզուն, ազգային ըստ նիւթին, ազգային ուսմունքն և ազգային ուսուցիչքն ալ: Անոնք որ ունենդրացս մէջէն դաստիարակութեան ազնիւ գրադման կապուած են, կամ թէ իրենց ընտանեաց և պաշտամանց առթիւ դաստիարակութեան խնդրին վրայ միտք յուղենցած, այնպիսիք պիտի գիտնան ինծի պէս, թէ ինչպէս կը բարախեն մանկական՝ պատանեկան և երիտասարդական սիրտեր, երբ ուսուցիչն բացառէ իրենց՝ հայազգի դիւցազնի մը քաջութիւնը՝ և փառքը, կամ վատաբախտ մեր հայրենեաց թշուառ խնդութիւնները: Անկեղծաբար խօսելով, իմ սիրտս անպատմելի մխիթարութիւն մը կը զգայ, երբ մատաղերամ պատանիներուն՝ հայրենական պատմութեան ուրախակից կամ տրամալից դէպքերը աւանդած տան կը տեսնեմ թէ խնդութիւնն ու տխրութիւնը, աշխոյժն ու թախիծը հետզհետէ անոնց կայտառ երեսաց վրայ կը գծագրուին: Հաւատացէ՛ք ինձ, ունկնդիրք իմ, թէ այն բնական և բնածին զգածումը մեծ յոյս կու տայ ինձ ապագային վրայ, գրաւական է ինձ այն՝ թէ բազմադարեան պանդուխտներս իսկ, որ հայրենի յիշատակները երկար ժամանակ մոռացութեան մէջ թողուցինք, և լեզունիս իսկ կորսն-

ցնելու վտանգի մէջ ինկանք, հոգին չենք կորսնցուցած: Հայութեան հոգին զօրաւոր հոգի է, սակաւ իսկ կրթութեամբ մեծամեծ արդիւնքներ կարող է արտադրել: Հայեր և Հայունիներ, ծնողք և դաստիարակներ, եթէ յուսացուցիչ է ձեր դիտակէտն, ուրեմն աններելի էք՝ թէ որ Հայութեան հոգին համեմատ չէք գործեր հայ մանուկներուն նկատմամբ:

Այսու հանգերձ պէտք է հւսն խոստովանիլ, թէ արդի Հայութեան հոգին մէջ մանրագնին խուզարկութիւններ ընկելով դժուար է տեսնել վնասութեան երակներ՝ որ կամաց-կամաց սպրդած են մեր ազգին մէջ. և շատեր ա՛լ աւելի առջեւ երթալով կատարելապէս կը յուսահատին և Հայութեան հոգին վրայ տխուր տապանագիր մըն ալ կը դնեն. — Ա՛լ այս ազգէն յոյս չկայ: Հայութեան հոգին տկարութեան մէկ նշանն է արդեօք այդ վնասութեան խօսքը. ո՛չ երբեք, սիրելիք իմ, մանաւանդ թէ անոր զօրութեան մէկ նշանն է. վասն զի ան որ այսպէս կը խօսի՝ տխրութիւն մը իր զգոյս իր սիրտին մէջ, և բռնադատեալ կ'արտասանէ այն ահագին խօսքերը, ինչպէս զաւակ մը իր սիրեցեալ մօրը մահուան անկողնին քով՝ անոր վրայ հոգեվարքի նշանները տեսնելով, երեսը կը դարձնէ և մօտ կեցողին արտասուելից աչօք և սրտառուչ հեկեկանօք կ'ըսէ. — Ա՛լ իր կենաց յոյս չկայ: Արդեօք այդ զաւակը՝ նուա՞զ սէր ունի իր մօրը հանդէպ:

Ի՞նչ ըսենք ուրեմն այդ վնասութեան նշաններուն և կիսահաղաղ բացատրութիւններուն վրայ. իրա՞ն է արդեօք որ Հայութեան հոգին վրայ յոյս մը զնկու չէ: Օ՛ն անդր, քա՛ւ լիցի: Անոնք որ այսպէս կը խօսին՝ կրկի՛ն ծանրութեան տակ ճնշուած կը զգան իրենց դադափարները. մէկ կողմէն մեր հէք հայրենեաց սրտակոտոր վիճակը, ուր ամէն ինչ

թշուառութիւն կը շնչէ և յողբս կը շարժէ. միւս կողմէն յառաջացեալ կամ յառաջդիմութեան ձեռք զարկած ազգերուն օրինակները, որոնք եթէ յաջողութեան կը հասնին՝ այնչափ և այնպիսի դիւրութեամբք և նպաստիւք զօրացեալ են, որ հայ ազգութեան ո՛չ թէ ի մօտոյ ունենալն՝ այլ և ի հեռուստ ակնկալելն իսկ անհաւանական կը դատուի: Որչափ որ ես ալ այդ տեսութեանց ծանրութիւնը զգամ, — և եթէ անկեղծ խոստովանութիւն մըն ալ կ'ուզէք, որչափ որ ես ալ պահ մը այդ վնասեցուցիչ տեսութեանց առջեւ՝ տխուր մտադանջութեանց մատնուած ըլլամ, — բայց հիմա պիտի ըսեմ թէ Հայութեան հոգին պէտք է այդ տարամոռութիւնները ի բաց փարատէ: Ինչ որ ալ ըլլայ անցեալը, որուն վրայ խօսիլ իսկ աւելորդ է, այսօր Հայութեան հոգին իր վրայ վստահելու չափ իրաւունք ունի:

Այո՛ ունի, վասն զի իր ցարդ դիմանալը այնպիսի անցեալ մըն է, որ ապագայ վտանգին վախը կը փարատէ: Ունի՛ վասն զի որչափ ալ վարատական և գաղթական, որչափ ալ տկար և անզօր, բայց տակաւին վառ կը պահէ աննկուն հոգի մը: Ունի՛ վասն զի արդեան վիճակը նախկինէն տարբեր է, այսօրը երէկէն ազէկ, որով վաղն ալ այսօրէն ընտիր կը գուշակուի: Ունի՛ վասն զի իր իրաւանց արձագանգը բարձրագոյն տեղեր ելաւ, և միջազգային ատեաններու վճիռով արդարացաւ: Ունի՛ վասն զի քաղաքական հարկին բարձրագոյն օրէնքն իր վիճակն ալ նկատեց, և անոր ալ իր պաշտպանութիւնը շնորհեց: Ունի՛ վասն զի ամէն տեղ Հայն սթափեցաւ, և եթէ միտքն դժուարանայ, սիրտն կը շարժի գործել և յուսալ: Ունի՛ վասն զի այսօր մեզմէ իւրաքանչիւրն ալ այդ ապահովութիւնը կը զգայ, և ուր հասարակաց կարծիքը կը միանայ, անդ փիլիսոփայք աներ-

կեւան ճշմարտութիւն կը հաստատեն: Վերը վհատեալ հոգիները յիշեցի, ասոնք շատ էին, այսօր նուազեցան, վասն զի առիթներն իսկ նուազեցան. և մենք որ իմաստասիրելով այդ հետեւութեան հասանք՝ պարտաւոր ենք ընդհանրացնել այդ համոզումը, և բանիւ և գործով աշխատիլ որ Հայութեան հոգին ամէնուրեք և ամէն սիրտի մէջ զգենու նոր աշխոյժ, նոր եռանդ և նոր գործունէութիւն:

Հայութեան հոգիին մէջ ուրիշ թերութիւն մը եւս կը նկատեն ոմանք, այն է դիւրաւ իր ազգութեան անունն, լեզուն, սովորութիւնն և տարազն թողլով՝ օտարազգեաց նմանիլ, և փառք սեպել իսկ՝ երբ մէկը ա'յնչափ կարենայ իր անձնաւորութիւնը ծպտել և կեղծել որ Եւրոպացիի մը հետ շփոթուի: Այդ յանցանքի, կամ թէ կ'ուզէք յանցանք ալ չ'ըսեմ, այդ թեթեւ բնաւորութեան տէր անձինք մեր ազգէնք մէջ եղած են, և կան իսկ. սակայն անիրաւ է ըսելն՝ թէ այդպիսեաց ըրածը Հայութեան հոգիին իբր կանոն մը պէտք է առնուի: Ասոնք ո'չ ազգին ընդհանրութիւնը կը կազմեն, և ո'չ ալ ազգին մեծամասնութեան մէջ կը գտնուին: Այդ ընդհանրէն շատերն ալ դիւրաւ չքմեղանք կը գտնեն, որովհետեւ իրենց ուսումնական կրթութիւնը ազգին կեդրոնին մէջ չկարենալով գտնել, օտար աշխարհաց մէջ պարտաւորեցան փնտռել, և օտար սովորութեանց ընտանեացն, իսկ ունակութեան զօրութիւնն ալ ոչ ոք կրնայ ուրանալ: Վարդ ժողովելու գացին, փուշն ալ մէկտեղ բերին: Իսկ անոնք որ հեռուոր աշխարհներ գաղթելով՝ ժամանակով տեղացիներու հետ խառնուեցան և ոչնչացան, գրեթէ բնական հարկի մը զոհ եղած պէտք է ըսուին, և ո'չ թէ հոգիի տկարութեամբ յանցաւոր:

Գալով առաջիններուն, մեր փոյթը պիտի ըլլայ

ճանչնալ և ծանուցանել թէ այս չէ յառաջդիմութեան նշանը և արդիւնքը, և ջանալ որ անազութիւն մը՝ որ բարեբախտաբար քիչերու մէջ պարփակեալ է՝ շնորհարձակուի: Եւ եթէ արմատաքի դարման մը կը փնտռուի, այն եւս առաջին անգամ զրուցածներուս հետ կը նոյնանայ, այն է՝ փութալ ազգային դաստիարակութեամբ սնուցանել մեր պատանեակները, և անոնց երկրորդական և բարձրագոյն ուսումն ալ ազգայինի վերածելու աշխատիլ, ազգային մամուլը հարստացնել, ազգային ընտիր և օգտակար լրագրաց միջոցաւ հանապազօր ազգային ճաշակ տպաւորել երիտասարդութեան սիրտին մէջ. մէկ խօսքով ինչ որ մտաց և սիրտի յագուրդ է, ուսում կամ գիտութիւն՝ ազգային պարունակին մէջ լրացուցանել, որ իրաւամբ կարեւորն իսկ օտար պարունակաց մէջ փնտռելու չպարտաւորուին: Իրաւ որ առայժմ ուսումնական արուեստից համար համալսարաններ յաճախողներ դժուարաւ պիտի կարենան հայկական համալսարան մը գտնել. բայց միթէ հնար չէ՞ որ ազգին մեծամասնութիւնը՝ գոնէ ուսումնական անձ մը ըլլալու կարեւոր եղածը՝ իր ազգին ծոցին մէջ լիովին և կատարելապէս ունենայ:

Եթէ ճշմարիտը խօսիլ ուզենք, ազգին մեծամասնութիւնը և գրեթէ ընդհանրութիւնը՝ լիովին յարած է այն ամէն բանի որ իրն է, և այդ յարումն եղած է իր փրկութեան ալ գլխաւոր պատճառը. և այս մասին աշխատութիւն մը պէտք չէ ազգը համոզելու: Թերեւս հակառակ այսր եղած բացառութեանց խօսքն իսկ ընել հարկ չէր, եթէ բովանդակ իմ նպատակիս հետ յարաբերութիւն ունեցող կէտերը ամենայն ճշդութեամբ մէջտեղ դնելու պարտքը չզգացի:

Ազգային կրթութիւն մը տալով, վհատութեան երկիւղը փարատելով, և օտարազգեաց նմանելու թե-

թեւութենէն փախչելով Հայութեան հոգին արծարծել, ահա՛ ընկիւթնիս. ասոր արդիւնքն են մէկ կողմէ Հայութեան հոգիին բնութիւնը հաստատել, միւս կողմէ այս հոգիին վրայ դրուած արատները սրբել. մէկ կողմէ եղած ամբաստանութեանց արգարացումը տալ, միւս կողմէ ընկալեալ պակասութեանց դարմանները հոգալ. նախաքանիս մէջ տուած խոստմանս համեմատ տեսական խօսակցութիւններէ պիտի խորշէի, ահա՛ խոստմանս կատարումը, ահա՛ գործնական միջոցներու մեկնութիւնը, բայց դեռ ուրիշ ծանրակշիռ կէտ մը եւս կայ, այն ալ պէտք է մեկնել, թէպէտ աւարտելու ալ տեսնը կը հասնի:

Բանախօսութեանս առաջին մասին մէջ բաւական բացատրեցի Հայութեան հոգիին բնածին յատկութիւններէն մին, որ էր արտակերպական դրութեան ունեցած յարումը և անհատական յատկութեան և զօրութեանց ազատ ասպարէզ պահանջելու միտումը: Անոնք որ Հայութեան ապագային համար կ'աշխատին՝ հարկ է որ միտքերնուն առջեւ ունենան թէ պարտաւոր են Հայութեան հոգիին համեմատ աշխատիլ: Շատ լաւ դրութիւններ, շատ ընտիր օրէնքներ, շատ օգտակար գործեր կը հաստատուին կամ կը կատարուին զանազան աշխարհներու և ազգերու մէջ. անտեղի է պնդելը թէ ի հարկէ անոնք մեր ազգին և մեր աշխարհին մէջ ալ, պէտք է նոյն կերպով գործադրել, և անկէց՝ աներկբայ օգուտներ սպասել: Շատ իմաստուն մէկը ըլլալ հարկ չէ, իմանալու կամ իմացնելու համար՝ թէ ընտիր օրէնքը բացարձակ բան մը չէ, այլ յարաբերական, և ինչ որ ուսմանց համար օգտակար է՝ ուրիշներու համար վնասակար կրնայ ըլլալ: Սահմանադրական հոգիին վրայ իսկ խօսելով, որու օգտակարութիւնն այժմ ազգաց մեծագոյն մասէն ընկալեալ և գործադրեալ է, ո՞չ

ապաքէն չատ մը իմաստուն քաղաքագէտք կ'ըսեն թէ այս կամ այն ազգին յարմար չէ, օգտակար չէ. ո՞չ ապաքէն սահմանադրութեան հաստատուելուն և արտակերպական ոճին համար ժողովրդեան մէջ չափաւոր յառաջդիմութիւն և զարգացում փնտռել սկզբունք եղած է:

Մեր ժողովրդեան յառաջդիմութեան որչափ ըլլալը չքննեմ, այլ յաւէտ ցուցնելն ետքը թէ անոր համար արտակերպական ոճն, բնական պահանջք մըն է, օրինաւոր կը սեպեմ հետեւցնելը թէ ուրիշ մեր ազգը յառաջադէմ և զարգացեալ ժողովուրդ մըն է: Սակայն երկուք են զարգացմունք. մէկը բնական տաղանդին արդիւնքն է, և այս մեր ազգին մէջ կայ, իսկ միւսն՝ ուսումնական դաստիարակութեան արդիւնք է, և անոր մէջ չատ պակասութիւններ ունինք տակաւին: Ասոնցմէ առաջինն ալ բաւական է որ մեր ազգին զարգացեալ մարդոց յարմար սեպուած վարչութեան և մատակարարութեան ոճը շնորհուի, և այն ամէն ազգայինք որ Հայութեան բարիին համար կ'աշխատին՝ թող սոյն կանոնաց հպատակին. և եթէ կ'ուզեն որ իրենց ջանքն արգաստրեր ըլլայ, թող օտարոտի ճամբաներու չերթան, և եթէ կ'երթան՝ թող չզարմանան երբ իրենց ջանքն վայրապար և անօգուտ կը մնան:

Սակայն լաւ իմացունին խօսքերս, և չըլլայ թէ ոմանք այլ ընդ այլոյ իմաստ մը տան անոնց: Որպէս զի ամէն սկզբունք և ամէն կանոն իր նպատակին հասնի, պէտք է յարգէ ծայրայեղութենէ փախչելու օրէնքը, և ոչ ոք պնդէ մէկ ծայրը՝ մոռնալով միւս ծայրը. այլ գիտնայ թէ ինչ որ առաքինութիւն է՝ միջին տեղին մնալ կը պարտաւորի: Ծայրայեղութիւն մըն է եթէ մէկը պնդէ և ըսէ. — Որովհետեւ արտակերպական ոճը աւելի յարմար դատուած է

մեր ազգին վարչութեան և աւելի օգտակար անոր յառաջդիմութեան, անոր համար անհնար է բարեխառնել զայն արտաքոյ կարգի տրամադրութեամբ մը՝ արտաքոյ կարգի գործոց մէջ, և իսպառ հերքելի են ոմանց և սակաւուց գործերը եւս՝ երբ անոնցմէ յայանի օգուտներ կը տեսնուին: Բայց ծայրայեղութիւն է եւս՝ եթէ ուրիշ մը պնդէ և ըսէ.— Որովհետեւ կան առիթներ որոնց մէջ մէկի կամ սակաւուց գործը խորհրդապահութեան, գաղտնութեան, չուտութեան և պատեհութեան պարագաներով անմիջական օգուտներ կ'արտադրէ, առանց երկար վէճերու և քննութեանց ժամավաճառութեան, պէտք է ուրեմն միշտ այդ կերպով գործել, և հակառակ ճամբան խափանել, ջանալ իսկ որ ազգային ժողովրդական հոգին իր ազդեցութիւնը կտրսնցնէ:

Տո՛ւր ինձ խումբ մը մարդիկ որ առաջին կարծիքը պաշտպանէ, տո՛ւր ինձ մը եւս որ երկրորդ կարծեաց ջատագովութիւնը ընէ, և ահա՛ ընդունայն վէճեր և անմիաբանութեան աղբիւրներ: Իրաւ է որ պիտի չըսեմ թէ այդ երկու խումբ մարդիկ անմիաբանութեան հոգի ունին. բայց ի՞նչ օգուտ անոնց հոգիին այս կերպ ըլլալէն կամ չըլլալէն, եթէ փաստը նոյն կերպով մէջտեղ կ'ելլէ: Ի՞նչ օգուտ կը հարցնէի... բայց միտքս կու գայ թէ օգուտ մը ունի. և այս է թէ քանի որ իրենց հոգին ըրածներնուն յարմար չէ, մեծ յոյս է որ երբ իրաց վիճակը իմանան՝ դիւրաւ պիտի թողուն իրենց պատահական սխալանքը և պիտի չպնդեն ընդունայն տարածայնութեանց վրայ: Մանաւանդ որ, Ունկնդի՛րք իմ, ամենէն մեծ իմաստութիւն՝ ժամանակը ճանչնալն է, առիթները կշռել, պարագաները կշռադատել, և իւրաքանչիւր օրուան և իւրաքանչիւր վայրկեանին մէջ ինչ որ պէտք է զայն գործել, և ո՛չ թէ ինչ որ տեսականապէս ընտիր է՝ անոր հետեւիլ:

Կարեւոր ժամանակի մը մէջ ենք. առիթներն ու պարագաները զորս մենք ստեղծեցինք, կամ որ առանց մեր կամաց իսկ մէջտեղ ելան, ծանրակշիռ են, և մեր ձեռքն է որ անոնք աւելի իսկ ծանրակշիռ ըլլան, քան թէ ինչ որ են: Դուք որ ազգին բախտը ձեռունիդ ունիք, իշխանաւորք և պատուաւորք ազգիս, դուք որ ազգին կեդրոնը կը կազմէք, վարչութեան գլուխք և անդամք, դուք որ սրբազան երդմամբ և օրինական պարտաւորութեամբ ազգին բարութեան և յառաջդիմութեան պատասխանատուութիւնը ստանձնած էք, ձեզ ամենեցուն կը յանդգնիմ յիշեցունել.— թէպէտ խրատատու ըլլալու իշխանութիւնը չունիմ, այլ կը խօսիմ այն համարձակութեամբ՝ զոր ճշմարտութիւնն իր անքննելի գորութեամբ կ'ազդէ ամէն խիղճի և սիրտի.— ձեզ ամենեցուն կը յանդգնիմ յիշեցունել, թէ կը սխալիք և մեծ յանցանք կը բարդէք ձեր գլուխը, եթէ կը մոռնաք ի նկատի առնուլ՝ թէ ի՛նչ է ժողովրդեան միտքը և կամքը. եթէ ազգային գործը ենթադրելով իրը ձեր միայն գործ՝ դուրսէն եկած լոյսերուն և խրատներուն յարգ չէք ընծայեր. եթէ անձնիւր գործունէութեան առջեւ արգելքներ յարուցանելով, կարծես թէ ձեր միայն գործունէութիւնը կ'ուղէք փայլեցնել. եթէ ուր օրինական կամ խոհմական կամ շահեկան ընթացից հարկը կը պահանջէ որ հպտակին և ժողովրդեան ալ բաղձանքն յարգուի, դուք ձեր իրականաց տարազէպ պաշտպանութեանը հետամուտ կ'ըլլաք:

Այլ և դուք ժողովուրդք և ժողովրդականք, դուք Հայի՛ր ամէն դասէ և կարգէ, եթէ կը բաղձաք խստապահանջ ըլլալ ձեր իշխանութեանց հետ, աւելի խստապահանջ եղէք ձեզի հետ: Եթէ պարտք մը կայ անոնց վրայ, կրկին պարտք մեր վրայ կը ծանրա-

նան. պէտք է ճանչնանք թէ ո՛չ միշտ իշխանութիւնն կրնայ իր ընթացից և գործոց սկիզբը և միջոցը և նպատակը ականյալոյն պարզաբանել, ո՛չ միշտ կրնայ իր ջատագովութիւնն իսկ կատարելապէս խօսիլ, ո՛չ միշտ կրնայ իր զգուշաւորութեանց կէտերը ստորա-սաբար հաստատել. ստէպ հասարակաց վստահու-թիւնն է որ իրեն գէն և զօրավիգ կ'ըլլայ ի գործ, և պաշտպան՝ գործէն ետքը: Երբ դժուարին են ժա-մանակք, օգտակար է իշխանութեան չորս կողմը ամփոփուելով, մի և միացեալ միութիւն մը կազմել, և անով ամէն կերպ դժուարութեանց դէմ մաքառիլ: Բաւական վստահութեան հիմ մըն է, որ նա՝ որ ազ-գին բախտին վրայ կը յոգնի ժողովրդական քուէէն ընդունած է իր պաշտօնն, և ժողովրդական քուէէն կը վայելէ վստահութեան յարատեւելը: Չափազանց պահանջողութիւնն թէպէտ և չար հոգի մը չէ, բայց բարի հոգիին զեղծումն ալ վնասակար է, և մենք մեր նախնեաց թշուառութենէն ուսեալ խրատելինք և զգաստանանք: Անոնց հոգին պաշտպանեցի իրաւ, բայց միթէ հնա՞ր է սխալանքն ալ պաշտպանել:

Դուք Հայե՛ր և Հայուհիներ, դուք որ ի բնէ անհատական ձիրքերու և կատարելութեանց պար-ծանքը ունիք, և անհատական գործունէութեան համբաւով կը փառաւորուիք, ահա՛ և ձեր իւրաքան-չիւրին առջեւ ընդարձակ ասպարէզ մը: Այդ գոր-ծը որ ամէնուս հաւասարապէս սիրելի, և ամէնուն ներքին զգացմանց դիտակէտն է, Հայութեան հոգիին ոճովն պիտի կատարուի: Անշարժ միտք չգտնուին, անզգայ սիրտք չտեսնուին, անգործ ձեռք չմնան. ամէն մարդ մտածէ, ամէն մարդ փութայ, ամէն մարդ գործէ. իւրաքանչիւրս իր կարողութեան հա-մեմատ կատարէ, և եթէ հնար է կարողութենէ աւելին ալ, վասն զի պէտքը միջոցներէն մեծագոյնն է

տակաւին: Երկուքնիս, երեքնիս, միանալով կարողութիւննիս շատցնենք, այդ խմբակներով ընկերու-թիւններ կազմենք, այդ ընկերութիւններով հասա-րակութիւնք յառաջանան, այդ հասարակութեամբ ազգը միանայ և զօրանայ: Մեր հոգիին համեմատ կը բաղձանք որ ամէնքնիս ալ սեպհական գործ մը ունենանք, և ամէն գործին համար ըսուի՝ թէ այս ալ այս անուն անձին գործն է: Ի՞նչ ընենք: Այդ ալ Հայութեան հոգիին մէկ յատկութիւնն է, եթէ կ'ու-զէք ըսեմ եւս՝ թէ մէկ տկարութիւնն է: Բայց այդ տկարութեան աղէկ կողմը կայ, և իւրաքանչիւր ոք թող աշխատի որ ինքն ալ աղէկ բան մը ըրած հա-մարուի: Երբ գործողներ կը շատնան, արդիւնքն ալ կը շատնայ, օգուտն ալ. միթէ ազգին վնասակա՞ր է այդ:

Բայց կրնայ վնասակար ըլլալ՝ եթէ այդ բաժա-նեալ գործք միութեան կէտ մը չունենան, եթէ այդ շառաւիղք կեդրոնի հետ միացած չըլլան, և դար-ձեալ՝ երբ այդ մասնական գործք գիրար կործանե-լու աշխատին, կամ իրերաց գործունէութեան աս-պարէզը խափանեն: Եթէ երբեք այսպիսի ինչ ընէ մէկը՝ նա չարաչար կը մեղանչէ Հայութեան հոգիին դէմ, և անոր անունը Հայութեան դարութեանէն իսկ ջնջուելու է. այլ երբ ընդհակառակն սուրբ նախան-ձով մը մին քան զմիւսն յառաջանալու կ'աշխատի, ինչո՞ւ վնասակար ըլլայ բաժանաբար գործելը: Կան բաներ որ անբաժան են, և անոնց մէջ միակութիւն հաստատելու է, ինչպէս հնար չէ երկու կեդրոն հաս-տատել մէկ չրջանակին մէջ: Այս առթիւն դուրս թող գանազան մասունք մնան, թող գանազանութեան կէ-տեր իսկ մնան. մասանց իրարու խառնուիլը և ձու-լուիլը չէ փնտռուածը, այլ մասանց իրարու կցիլը: Մանաւանդ թէ Հայութեան հոգիին ազգեցութեան

համեմատ այդ է միայն ապահով ուզին՝ որով մենք կրնանք յուսալ թէ մեր նպատակին պիտի հասնինք։ Ասոր համար ես երբեք չեմ մտածեր թէ ինչո՞ւ ընկերութիւնք մեր մէջ կը շատնան, և թէ ինչո՞ւ նորոգեալ և նորածնունդ՝ ընկերութիւնք օր քան զօր կը յաճախեն. մտածելու պատճառ կ'ըլլար՝ եթէ այդ ընկերութիւնք սկսէին իրարու գործը խափանել կամ իրարու գործունէութեան ասպարէզը գրաւել. բայց ցորչափ մէկը վասպուրականին մէջը կ'աշխատի, միւսը ի Տուրուբերան, մէկը ի Կիլիկիա, միւսը ի Փոքր Հայս, մէկը միւսին նպաստից չի փնտսեր, և հանգանակութեանց արգելք չի դնէր, կ'ուրախանամ իսկ որ գործողք կը շատնան այդ ընդարձակ դաշտին մէջ, ուր բազմաթիւ մշակաց պէտքը ամէն օր աւելի զգալի կ'ըլլայ։ Ըստ այսմ, ամէն հայ սիրտ պէտք է խնդութեամբ ողջունէ այդ ազգասէր թաղին մէջ ծնունդ առած նորութիւն մը, Հայունհաց Ազգանուէր Ընկերութիւնը, որ ազգասէր և ազգանուէր Թիկնանց և օրիորդաց ձեռնտուութիւնը և գործունէութիւնը և նպաստը կը բերէ ազգային յառաջդիմութեան գործին, և այնպիսի ձեւով և զգածմամբ՝ որ Հայութեան գեղեցիկ հոգիին արտայայտութիւնն են։ Զեր գեղեցիկ հոգիին առջեւ, ազգասէր Տիկնա՛յք և Օրիո՛րդք, պէտք է որ ամէն ազգասէր իր զարմացման հորիզ վճարէ, և անկեղծութեամբ կ'ըսեմ՝ թէ առանց սրտաշարժ զգացմանց չկրցայ ընթեռնուլ յայնկոյս վոսփորի ձեր փափուկ և համեստափայլ ըզձից բացատրութիւնները, որոնց՝ ձեր խմբէն մին ձեր անուամբ թարգմանն ըլլալ յանձնառու եղած էր։ Իցէ՛ թէ ձեր ազնիւ օրինակը ամէն թաղի և ամէն քաղաքի Հայունհաց մէջ տարածուէր։

Իսկ ընկերութեանց գործին գալով, — որովհետեւ ամէն բանի մէջ չափ և կանոն կարեւոր է, — անոնց

շատնալուն մէջ ալ օգտակար կ'ըլլայ հոգալ, որ բազմացնելու փափաքը մանր և աննշանակ էական օտեղծման շծառայէ. և միւս կողմէն լռելիայն կամ յայտնի միաբանութիւն մը զանազան ընկերութեանց գործերը բարեկարգէ։ Ուրիշ աշխարհաց մէջ սովորութիւն է զանազան ընկերութեանց կեդրոնական համայնախումբ մը ունենալ, ամէնուն գործը յարմար կերպով բաշխելու։ Հնար չէ՞ արդեօք նոյնը մեր մէջն ալ գործադրել։ Ազգային ընկերութեանց գործադիր ժողովոց մտադրութիւնը կը հրաւիրեմ այս կէտին վրայ, մանաւանդ որ կերպը բոլորովին յարմար է Հայութեան հոգիին։

Կրցա՞յ արդեօք, Ունկնդի՛րք իմ, նպատակիս հասնիլ և Հայութեան հոգին ինչպէս որ պէտք է ձեր առջեւ ներկայացնել։ Գիտեմ թէ շատ բաներ եւս կրնայի զրուցել, մանաւանդ թէ զրուցածներս ալ պարտ էր աւելի պարզ և կարգադրեալ կերպով բացատրել. սակայն նախընտրեցի որ խօսքերս սրտի զեղման արձաղանք մը ըլլան, քան թէ արուեստակեալ ճարտարախօսութեան օրինակ մը։ Երբ բովանդակ իսկ աշխարհ իբրեւ կաթսոյ յեռանդեան կը պղպշտկէ, երբ ազգ և ազինք իրենց ապագային խորհըրդովն կը տոչորին, երբ ամէն կողմէ յոյսի և ակընկալութեան ձայներ կը լսուին, երբ մեր ազգն ալ այդ բարեգուշակ շարժման մասնակցելու կը սկսի, ծանր է ինձ տեսնել որ շարագուշակ մարգարէներ մտացածին կարծիքներով և ենթադրութիւններով ազգասիրաց եռանդը կը մարեն և աշխատողաց ձեռքերը կը թուլցնեն։ Ամենէն ծանր էր Հայութեան հոգիին վրայ դրուած արատը, անմիաբանութեան տգեղ կնիքով անոր ճակատը պղծելը, և այս պակասութենէ՛ն առաջ եկած ուրիշ հիմնական թերութիւնները ենթադրել, որով անհնար կ'ըլլար բոլորովին

հայ ազգութենէն բարի ապագայ մը սպասել. ծանր էր ինձ կ'ըսեմ լսել այս ամէն եղերական ձայները, ուստի անոնց հակառակ խօսիլ ուզեցի, որպէս զի ցուցնեմ թէ ո՞րն է բուն իսկութիւնը, ո՞րն է պատահական պակասութիւնը, ի՞նչ է անոնց պատճառը, և ի՞նչ դարձեալ գործածուելու դարմանը: Ինչ որ ցարդ խօսեցայ բաւական ըլլայ. ուրիշներու կը թողում աւելի խոհական և աւելի կատարեալ գործը:

Երբ Հայաստանի տարաբախտ վիճակը կը քննեմ, երբ իր վրայ տիրող ազդեցութեանց ներգործութիւնը կը չափեմ, երբ եղկելի Հայոց ունեցած վիճակին չփոթութիւնները կը տեսնեմ, երբ մեր Հայրենեաց կատարեալ կործանմանէ հրաշալի աղատութիւնը կը նկատեմ, և միանգամայն կը լսեմ որ ոմանք զարմացմամբ առաջ կը դնեն Հայոց միաբանութեան և արիութեան մասին ըրած պակասութիւնները, և դրսորովանաց և դատապարտութեան խօսքեր կ'աւելցնեն այն խեղճերուն դէմ, անկեղծաբար ըսեմ, ես կը զարմանամ յաւէտ թէ ի՞նչպէս կրցեր են այնչափ միաբանութեան և արիութեան գործեր կատարել՝ որչափ ինչ պատմութիւնք և յիշատակք մեզ հասուցած են, և թէ ի՞նչպէս կրցած են պահել իրենց ազգութեան արդեան վիճակը, այն վիճակը՝ որ ոմանց աչքին այդչափ յետնեալ և ոչ ինչ կը տեսնուի:

Այդ ամենայն միութեան և հաստատութեան արդիւնք է, Սիրելի՛ք իմ, այն միութեան որով համազգիք եղբարք են իրերաց, եղբարք ի Հայկ և յԱրամ, եղբարք ի Գրիգորեանս և ի Ներսիսեանս: Այդ եղբայրութեան հոգին խորարմատ տպաւորեալ ունի Հայն իր սրտին մէջ, և նոյն կը հնչէ իր շրթանց վրայ, վասն զի յաւելուածոյ սրտի խօսի բերան: Մինչ ուրիշ ազգերու մէջ՝ ընկեր առ ընկեր տիրոջ անուն կ'ընծայէ, Հայաստանցին կը սիրէ իր համազ-

գին եղբայր անուանել: Շատ աւելի անոյշ և քնքուշ է ազգասիրաց ականջներուն Հայաստանի ռամկին ախպարը, քան թէ թրքախօս կամ պարսկախօս կամ գաղղիախօս հնչմամբ՝ համազգի առ համազգի տիրական անուանակոչում տալը: Մեր ըրածը չէ՝ Հայութեան հոգիին հաւատարիմ թարգմանը, այլ անոնց սովորութիւնը՝ որոնք հայրենական հողին վրայ ծնած և սնած, և տառապանաց բերամբ իսկ ճնշեալ, հայրենական նշխարաց հաւատարիմ պահպան՝ և հայրենական աւանդութեանց աւանդապահ են մնացած: Այդ աւանդութիւնն է թարգման Հայութեան հոգիին՝ որու համար կը պարծինք, և որով պէտք է որ վարումք ամէնքնիս, ոչ թէ շրթամբ՝ այլ և գործով եղբայր անունը տալով իրերաց. վասն զի՝

Բնդ ասեղոփ ի՞նչ կայ սիրուն,

Քան զանձկալի ՆՂԲԱՅԻ անուն:

Խորհրդաւոր յիշատակ մը ի դէպ կու գայ, եղբար՛ք իմ, որ Հայութեան հոգիին և ազգային եղբայրակցութեան յիշատակը փառաւորենք: Յեռանդն լրացաւ Ազգային Սահմանադրութեան իննեւտասներորդ տարեդարձը, և շուտով կը պատրաստուին ազգայիններ տօնախմբել զայն ազգային շրջանակի մէջ, այն Սահմանադրութիւնը՝ որ Հայութեան հոգիին հետեւութիւնն է, և որով Հայութեան հոգին իր օրինաւոր բացատրութիւնը ստացաւ: Տօնեցէ՛ք զայն և տօնախմբեցէ՛ք, եղբարք իմ, վասն զի անով Հայութեան հոգին կը տօնախմբէք. այլ միայն յուշ լիցի ձեզ, թէ սահմանադրութիւն սահման դնէ, և ամէն ինչ որ բարի է և օգտակար՝ դրուած սահմանաց մէջ պիտի շարժի: Բարի է Հայութեան հոգին, այլ երբ վերոյիշատակեալ սահմանաց կանոններովն գործէ:

ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼ
ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԿԻՆԿԻՈՅ, ԱՆԹԻՆԻԱՍ
Ե Ի

Mr. DAJAD K. ISRABIAN
Federal Bank of Lebanon
Beirut - Lebanon

Printed in Lebanon